Ճանաչի՛ր ինքդ քեզ

# Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 10.08.2022թ. չորեքշաբթի թիվ 29 (1054)

## Ուսում

Զարմանալի՜ լեզու է հայերենը: Ո՛ր բառը վերցնես, զննես, փորձես թափանցել նախնական իմաստի մեջ, այնպիսի՜ գանձեր կգտնես, որ կմնաս ապշած... Այդպես կարող է լինել միայն նախաստեղծ՝ **Աստվածային** լեզուն, որի համապաշարի ամեն մասնիկ տրամաբանորեն կապված է մյուսի հետ եւ զերծ է պատահական տառային կուտակում լինելուց, որի յուրաքանչյուր տառն արդեն իսկ բառիմաստային միավոր է, արմատ...

**Ուսում**, **ուսումնական**, **ուսյալ**... ծանոթ բառերի այս շարքում ոչ մեկիս մտքով չի անցել դնել **ուս** բառը եւ թվարկվածները դիտել՝ որպես այդ արմատից սկզբնավորվող բառեր...

Եթե ճիշտ է, որ առաջինը հայերն են **պարել** ու այդ արվեստը սկզբնավորել հենց **շուրջպարով**, **ուս ուսի** տալը, ուրեմն, դարձել է միավորվելու, միակամվելու, համախմբվելու իմաստակիր դարձվածք՝ ծագելով հենց այդ նույն շուրջպարի՝ ուս-ուսի իրական դիրքից: Իսկ ինչո՞ւ **ուսյալը** չհասկանանք **ուս ունենալը** կամ **ուս՝ թիկունք, դառնալը**, մի՞թե **անուսումը անմեջքն** ու **անթիկունքը** չէ, իսկ ուսյալը իրական **ուժ՝ թիկունք** ունեցողը: Ցանկացած ծանրություն, ուղղակի թե անուղղակի իմաստներով, մարդը կրում է իր **ուսերին**... Ուրեմն՝ ուսյալը **ուս** կամ **ուժ** ունեցողն է, ծանրությունը կրողը եւ հաղթահարողը:

Ինչեւէ, գիտական թե ոչ գիտական, այս մտորումները մի կարեւոր բան էլ են հուշում. միասնության, միակամության, համախմբման համար պետք է **ուս-ավորվել**, ասել է թե՝ **ուս-ում** ստանալ, ազգովի դառնալ **ուս-յալ** կամ **ուս-ումնական**...

Այս օրերին երկրի բուհերում ընթացող ընդունելության քննություններին (առկա եւ հեռակա) զուգահեռ, սկսվել եւ շարունակվում է ընդունելությունը նաեւ միջին եւ նախնական (արհեստագործական) մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Բարձրագույն, թե միջին, առկա թե հեռակա, կարեւորը **կրթություն** ստանալն է, որը նաեւ, ինչպես հուշում է հայերենը, մեր **միասնության եւ համախմբման շաղախն է,** մեր **հզորացման, զարգացման ու բարգավաճման երաշխիքը:**

Ուրեմն, որպես 11-րդ պատվիրան, հորդորենք մեր զավակներին՝

**սովորի՛ր, սովորեցրու՛:**

***Գ.Մ.***







Պաշտոնական

## Հանդիպում Նախագահականում



Հայաստանի Հանրապետության նախագահ **Վահագն Խաչատուրյանը** հանդիպում է ունեցել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանի** հետ:

Նախարարը ՀՀ նախագահին է ներկայացրել իրականացվող աշխատանքները, կրթական համակարգի բարեփոխումների ռազմավարության ուղղությունները եւ առաջիկա ծրագրերը:

Անդրադարձ է կատարվել 2022 թ.-ին հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունելության քննությունների ընդհանուր արդյունքներին: Վահագն Խաչատուրյանը եւ Վահրամ Դումանյանը մտքեր են փոխանակել նաեւ սպորտի եւ մշակույթի ոլորտներում իրականացվող ծրագրերի շուրջ:

## Օրենքի նախագիծ

Գործադիրի նիստում հավանության է արժանացել *«Հայաստանի Հանրապետության կրթության մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին»* ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնությունը: Սահմանված կարգով այն կներկայացվի Ազգային ժողով՝ հաստատման:

Հարցը զեկուցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը՝** նշելով, որ կրթության ոլորտի զարգացման վերջին պետական ծրագիրն ընդունվել է 2011 թվականին՝ 2011-2015 թթ. համար: Նրա խոսքով՝ ժամանակի հրամայական է Կառավարության կողմից գերակա ճանաչված մարդկային կապիտալի զարգացման հայեցակարգային դրույթների ամրագրումը երկարաժամկետ պլանավորման փաստաթղթում:

*«ՀՀ տնտեսական եւ հանրային կյանքի շարունակական եւ առաջանցիկ զարգացումը կարող է ապահովվել մարդկային կապիտալի զարգացման մեջ շոշափելի ներդրումներ կատարելու միջոցով: Այս տեսանկյունից կրթությանն ուղղված ֆինանսական միջոցները ոչ թե ծախս են, այլ անհրաժեշտ ներդրում՝ պետության եւ հասարակության զարգացման համար»*,-նշել է փոխնախարարը:

***շարունակությունը՝ էջ 2***

Աշխարհի հետ

## STARMUS VI միջազգային փառատոնին ընդառաջ

Սեպտեմբերի 5-ից 10-ը Երեւանում կայանալիք STARMUS VI միջազգային փառատոնը, որը հիմնադրել են **Գարիկ Իսրայելյանը** եւ **Բրայան Մեյը,** կհյուրընկալի ավելի քան 50 բանախոսների, Նոբելյան մրցանակակիրների, տիեզերագնացների, գիտնականների, աշխարհահռչակ արվեստագետների եւ երաժշտության աստղերի, որոնք հանրության հետ կկիսվեն իրենց գիտելիքներով, փորձով եւ նորագույն հայտնագործություններով: STARMUS աշխարհահռչակ փառատոնը կապված է Ստիվեն Հոքինգի, Բրայան Մեյի, Ալեքսեյ Լեոնովի եւ աշխարհահռչակ այլ հայտնի անունների հետ: Այն անցկացվում 2011 թվականից եւ միավորում է գիտությունը, կրթությունը, արվեստն ու տեխնոլոգիաները:

***շարունակությունը՝ էջ 2***

# STARMUS VI միջազգային փառատոնին ընդառաջ

*սկիզբը՝ էջ 1*

Queen խմբի համահիմնադիր, երաժիշտ, երգիչ, երգահան, աստղաֆիզիկոս եւ լուսանկարիչ դոկտոր Բրայան Մեյը հաստատել է իր ներկայությունը Հայաստանում՝ 2022 թվականի սեպտեմբերի սկզբին: Նա առավել հայտնի է՝ որպես Queen ռոք խմբի առաջատար կիթառահար եւ խմբի համար ստեղծված իր միջազգային հիթերով: Դոկտոր Մեյը հայտնի է նաեւ՝ որպես աստղաֆիզիկոս եւ գիտության հանրայնացմամբ զբաղվող մասնագետ: 2020 թվականին Total Guitar ամսագրի կողմից նա ճանաչվել է բոլոր ժամանակների լավագույն կիթառահար:

Չնայած 1988 թվականին Բրայան Մեյը նշանակալի դեր է խաղացել Rock Aid Armenia արշավում, որի ընթացքում նա անձամբ է հրավիրել համաշխարհային բազմաթիվ աստղերի նախագծին միանալու եւ աջակցելու, սակայն երբեք չի եղել Հայաստանում:

Դոկտոր Բրայան Մեյը 1998 թվականին հանդիպել է Կանարյան կղզիների աստղաֆիզիկայի ինստիտուտի դոկտոր Գարիկ Իսրաելյանին: Տարիներ անց՝ 2007 թվականին, Իսրաելյանն օգնել է Մեյին ավարտելու իր թեկնածուական թեզը եւ ստանալու աստղաֆիզիկայի գիտությունների դոկտորի աստիճանը Լոնդոնի Կայսերական քոլեջում: Բրայան Մեյի եւ Գարիկ Իսրաելյանի ընկերությունը հանգեցրել է հայ դուդուկի լեգենդ Ջիվան Գասպարյանի հետ համագործակցությանը: 2005 թվականին նրանք բացառիկ ելույթ են ունեցել Թրոմսոյում՝ Նելսոն Մանդելային նվիրված 46664 համերգի ժամանակ:



2011թ.-ին Բրայան Մեյը եւ Գարիկ Իսրաելյանը նախաձեռնել են գիտության եւ արվեստի համագործակցության յուրահատուկ ձեւաչափ, որի միջոցով գիտության հանրայնացման գաղափարը դարձել է գիտության հաղորդակցության համաշխարհային հիանալի փառատոն՝ համախմբելով մոլորակի ամենափայլուն դեմքերին: Այն նպատակ ուներ ոգեշնչելու եւ կրթելու հետազոտողների նոր սերունդներ եւ վերածնելու հայտնագործության ոգին: Մինչ օրս անցկացվել է 5 փառատոն (Իսպանիայում, Նորվեգիայում եւ Շվեյցարիայում), իսկ 6-րդը կանցկացվի Հայաստանում 2022 թվականի սեպտեմբերին:

STARMUS VI գիտության եւ արվեստի փառատոնը անց է կացվելու *«STARMUS VI. 50 տարի Մարսի վրա»* խորագրով եւ նվիրված է լինելու Մարսի վրա Մարս 3 տիեզերակայանի առաջին վայրէջքի 50-ամյակին: Հատկանշական է, որ Մարս 3-ը տեղափոխել է դեպի Կարմիր մոլորակ հայ մեծանուն ինժեներ Ալեքսանդր Քեմուրջյանի Prop-M (փրոփ-էմ) ռոբոտը:

STARMUS VI Հայաստանը կհյուրընկալի նաեւ համաշխարհային ճանաչում ունեցող բազմաթիվ այլ երաժիշտների:

# Օրենքի նախագիծ

*սկիզբը՝ էջ 1*

Արթուր Մարտիրոսյանը փաստել է՝ նախագծի մշակումը կատարվել է մասնակցային գործընթացով. այն քննարկվել է կրթության տարբեր շահակից խմբերի եւ լայն հանրության հետ՝ վերջնարդյունքում արժանանալով համընդհանուր հավանության: Նրա խոսքով՝ նախագիծը մի քանի անգամ քննարկվել է նաեւ ՀՀ վարչապետի մոտ եւ լրամշակվել քննարկումների արդյունքներով: Մասնավորապես՝ հստակեցվել է մինչեւ 2030թ. արդյունքային շրջանակը, որը ներկայացված է կրթության բոլոր մակարդակները ներառող արդյունքներով:

Ներկայացնելով ծրագրի հիմնական դրույթները՝ Արթուր Մարտիրոսյանը շեշտել է, որ **ծրագրի կենտրոնում մարդն է,** իսկ նրա կարողությունների ընդլայնումը՝ մարդկային կապիտալը զարգացնելու եւ իրացնելու միջոց: Ըստ նախարարի տեղակալի՝ **կրթության զարգացման տեսլականն այն է,** որ յուրաքանչյուր ոք օժտված է որոշակի տաղանդով, եւ կրթության համակարգի առաքելությունն է բացահայտել եւ հնարավորինս զարգացնել յուրաքանչյուրի տաղանդները՝ ընդլայնելով իր երկրում սեփական բարեկեցությունն ապահովելու անհատի հնարավորությունները, որի երաշխավորը պետք է լինեն մրցունակ տնտեսությունն ու կայուն պետությունը:

Արթուր Մարտիրոսյանի խոսքով՝ **ծրագրի վերջնական նպատակն է՝** ձեւավորել ազգային եւ համամարդկային արժեքների վրա հիմնված, ՀՀ զարգացմանը միտված արդյունավետ եւ միջազգայնորեն մրցունակ կրթական համակարգ, որը յուրաքանչյուրին, կյանքի բոլոր փուլերում, հնարավորություն կտա ստանալ իր կարիքներին եւ ընդունակություններին համապատասխան որակյալ կրթություն, ապահովել իր երկրում սեփական բարեկեցության կառուցման համար անհատի մրցունակ մասնագիտական պատրաստվածությունը, ինչպես նաեւ ակտիվ քաղաքացիական դիրքորոշումը:

Ծրագրի վերջնանպատակի իրականացման համար, ըստ Արթուր Մարտիրոսյանի, սահմանվել են հետեւյալ երեք ռազմավարական ուղղությունները՝ **համընդհանուր ներառական սովորողակենտրոն կրթական միջավայրի ստեղծում ՀՀ ողջ տարածքում, կրթության արդյունավետության բարձրացում եւ կրթական ծառայությունների ու արտադրանքի միջազգայնացում եւ արտահանում:**

Նախարարի տեղակալը հնչեցրել է նաեւ փաստաթղթի՝ առավել նշանակալի հայեցակարգային դրույթները նախադպրոցական, հանրակրթության, ՄԿՈՒ, բարձրագույն եւ շարունակական կրթության ոլորտներում:

**Հանրակրթության եւ ՄԿՈՒ ոլորտում նախատեսվում է՝**

*- հասանելի եւ մատչելի ուսումնական հաստատությունների ու կրթական ծրագրերի համընդհանուր ծածկույթի ապահովում՝ հաշվի առնելով տարածքային համաչափ զարգացման եւ ազգային անվտանգության առաջնահերթությունները,*

*- դպրոց ընդունվող բոլոր երեխաներն առնվազն 1 տարի ընդգրկված կլինեն նախադպրոցական ծրագրերում, 3-5 տարեկանների՝ առնվազն 95%-ը, իսկ մսուրի ծառայություններ կգործեն բոլոր խոշորացված համայնքներում,*

*- բոլոր դպրոցները կունենան պատշաճ կահավորված եւ արդիական սարքավորումներով հագեցված, սանիտարահիգիենիկ, անվտանգային ստանդարտներին բավարարող եւ համընդհանուր մատչելի շենքեր, կապահովվի համացանցի որակյալ հասանելիություն, ժամանակակից հետազոտական ենթակառուցվածքների, մարզադահլիճների, գրադարանների, նորարարական ոճով կահավորված անհատական եւ թիմային աշխատանքային տարածքների առկայություն:*

*- բոլոր դպրոցները, ՄԿՈՒ հաստատությունները համալրված կլինեն որակավորված եւ սահմանված ստանդարտներին համապատասխան ատեստավորված մանկավարժներով. մանկավարժի, դասախոսի, դասավանդողի գործունեությունը կլինի պատշաճ վարձատրվող եւ հասարակական հեղինակություն վայելող մասնագիտություն,*

*- ոչ մի երեխա մեր երկրում դուրս չի մնա պարտադիր կրթության համակարգից,*

*- ուսումնառության «արդյունքներ-ուսումնառության տեւողություն» հարաբերակցությունը ներկայիս 8,3-12 տարի հարաբերակցությունից կհասցվի 11,5-12 տարի հարաբերակցության,*

*- դպրոցականները կունենան հայոց լեզվի եւ պատմության, հայ եւ համաշխարհային գրականության, հոգեւոր, էթիկական արժեքների, առողջ ապրելակերպի, ինչպես նաեւ առնվազն երկու օտար լեզուների գծով բավարար գիտելիքներ,*

*- հեռավար կրթական ծառայություններ, էլեկտրոնային բաց պաշարներ, առցանց դասընթացներ կներդրվեն կրթության բոլոր մակարդակներում, այդ թվում՝ գյուղական եւ սահմանամերձ համայնքների համար:*

**Բարձրագույն կրթության համակարգում նախատեսվում է՝**

*- բոլոր բուհերի համար կսահմանվեն միջազգայնորեն ընդունելի միասնական լիցենզավորման եւ հավատարմագրման ստանդարտներ, կներդրվեն որակի ապահովման միասնական գործիքներ,*

*- բուհերի համար կստեղծվեի հավասար մրցակցային դաշտ,*

*- բուհերում օտար լեզվով դասավանդման հնարավորությունները կընդլայնվեն,*

*- աշխատաշուկայի պահանջներին կներդրվեն համապատասխան նոր կրթական ծրագրեր,*

*- 2030 թվականին ուսումնարանը, քոլեջն ու բուհը ավարտելուց հետո, ըստ մասնագիտության, կաշխատեն շրջանավարտների 90%-ը,*

*- կստեղծվեն 100% պետական ֆինանսավորմամբ 5-8 ԲՈՒՀ՝ չբացառելով վճարովի ուսուցման հնարավորությունը*

*- 2030-ին առնվազն 4 հայաստանյան բուհ ընդգրկված կլինեն միջազգային վարկանիշային աղյուսակների լավագույն 500-ի մեջ,*

*- կստեղծվի ակադեմիական քաղաք՝ որպես որակյալ բարձրագույն կրթության եւ հետազոտության համար արդիական կրթական միջավայրի ապահովման կամպուսային կլաստերների համախումբ:*

*- Ակնկալվում է, որ այս համալիր միջոցառումների արդյունքում 2030 թվականին օտարերկրյա ուսանողների ներկայիս շուրջ 7600 թիվն առնվազն կկրկնապատկվի:*

*- բարձր առաջադիմություն ցուցաբերող, սակայն սոցիալապես անապահով ուսանողներին կտրամադրվեն պետական կրթաթոշակներ՝ բացառելով անվճարունակության պատճառով նման ուսանողների՝ բուհերից դուրս մնալու դեպքերը:*

Միաժամանակ կընդլայնվեն հայեցի կրթություն ստանալու՝ աշխարհասփյուռ հայության հնարավորությունները՝ այդ թվում հեռավար ուսուցման միջոցների զարգացմամբ, կապահովվի, որ սփյուռքում գործող հայկական կրթօջախները ինտեգրված լինեն Հայաստանի կրթական համակարգին:

**ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանի խոսքով՝** նախագիծը մշտապես գտնվել է Վարչապետի ուշադրության կենտրոնում, եւ բոլոր քննարկումները տեղի են ունեցել հենց նրա գլխավորությամբ: *«Մենք մի քանի չափանիշներ ենք սահմանել. առաջինը՝ պետք է իրականացել մեր նախընտրական խոստումները, այս դեպքում՝ ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագիրը: Մեզ համար շատ կարեւոր է, որ ուսման վարձավճարի պատճառով բարձր առաջադիմություն եւ պատշաճ վարքագիծ դրսեւորող որեւէ ուսանող չզրկվի մասնագիտական ու բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունից, կրթական ծառայությունները պետք է մատչելի լինեն ՀՀ քաղաքացիների համար իրենց իսկ բնակավայրում»,-* նշել է փոխվարչապետը՝ ընդծելով, որ այս խնդիրը թիրախավորելու համար գործում է մեկ այլ ծրագիր, որը վերաբերում է 300 դպրոցի եւ 500 մանկապարտեզի մեծածավալ շինարարական աշխատանքներին, որոնք այս պահին ընթանում են ՀՀ բոլոր մարզերում եւ Երեւանում:

Ռազմավարության մյուս կարեւոր կետը, ըստ Համբարձում Մաթեւոսյանի, վերաբերում է ակադեմիական քաղաքին, որն իր բնույթով, ֆիզիկական ենթակառուցվածքներով եւ բովանդակությամբ պետք է նոր չափանիշ սահմանի ոչ միայն ՀՀ-ի մասշտաբներով, այլեւ հնարավորինս հասանելի լինի Սփյուռքի մեր հայրենակիցների եւ օտարերկրյա ուսանողների համար: *«Կրթության զարգացման պետական ծրագիրը թերեւս միակ ոլորտային փաստաթուղթն է, որը պետք է հաստատվի Ազգային ժողովի կողմից, որով էլ ընդգծվում է փաստաթղթի կարեւորությունը»,-* փաստել է փոխվարչապետը:

**ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանն** իր հերթին նշել է, որ փաստաթուղթը բավականին երկար է քննարկվել. *«Դրա պատճառն այն էր, որ մենք բոլոր ուղղություններով պետք է հասկանայինք մեր տեսլականը եւ հավատայինք դրա իրականացմանը: Առաջին հայացքից կարող է թվալ, որ 8 տարիների ընթացքում բարդ է նախանշված նպատակներին հասնելը, բայց վերջին 4 տարիների ընթացքում կրթության ոլորտում շատ ուղղություններով բավականին աշխատանք ենք արել ու առաջ գնացել»:*

Նշենք, որ նախագիծը մշակվել է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության ծրագիրը, Հայաստանի՝ մինչեւ 2050 թվականը վերափոխման ռազմավարությունը, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված 2030 թվականի համար Կայուն զարգացման նպատակների մասին բանաձեւը, մի շարք այլ ռազմավարական փաստաթղթեր:

Հավելենք, որ Ազգային ժողովի կողմից ծրագրի հաստատումից հետո ՀՀ կառավարությունը կհաստատի նաեւ ծրագրի իրականացման գործողությունների պլանը:

***ՀԵՂԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

Երիտասարդական

# Հրազդանը՝ 2022 թ. մայրաքաղաք

Տեղի է ունեցել *«Հրազդանը՝ ՀՀ 2022 թվականի երիտասարդական մայրաքաղաք»* ծրագրի պաշտոնական բացման արարողությունը: Հանդիսավոր պայմաններում Հրազդանին են հանձնվել խորհրդանշական փոխանցիկ բանալին եւ հավաստագիրը, որով Հրազդան քաղաքին շնորհվել է *«Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք»* տիտղոսը:



Ծրագրի մեկնարկին ներկա են եղել ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը** եւ Հրազդանի համայնքապետ **Սեւակ Միքայելյանը:**

Միջոցառումների մեկնարկը տրվել է քայլերթով՝ դեպի Մաքրավան թաղամասում գտնվող անմահ հերոսների հիշատակը հավերժացնող համաքաղաքային հուշահամալիր. մասնակցել են նաեւ արցախյան պատերազմների հերոսների ծնողներն ու հարազատները:

Միջոցառման շրջանակում Հրազդանի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնում տեղի է ունեցել հրազդանցի երիտասարդ ստեղծագործողների աշխատանքների ցուցադրություն (նկարչություն, քանդակագործություն, դեկորատիվ կիրառական արվեստ եւ այլն):

Ցուցահանդեսին հաջորդել է Հրազդանի դրամատիկական թատրոնում 2022թ թ. *«Հայաստանի երիտասարդական մայրաքաղաք»* հավաստագրի եւ խորհրդանշական բանալու հանձնման պաշտոնական արարողությունը:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը շնորհավորել է հրազդանցիներին տոնի առթիվ. *«Տարածքային համաչափ զարգացումը ենթադրում էսոցիալական, կրթական, մշակութային ծառայությունների մատչելիություն եւ հասանելիություն՝ անկախ բնակության վայրից: Հրազդանցի երիտասարդները եւսպետք է հնարավորություն ունենան ապրելու երիտասարդական բուռն կյանքով: Ցանկանում եմ, որ այդ առումով՝ Հրազդանը,՝ որպես երիտասարդական մայրաքաղաք, շարունակի իր գործառույթները ոչ միայն այս, այլեւ հետագա տարիներին եւս»:*

Հրազդանի քաղաքապետ Սեւակ Միքայելյանն էլ իր ելույթում նշել է, որ երիտասարդական մայրաքաղաքի տիտղոսը պարտավորեցնող է, եւ իրենքպատրաստակամ են աջակցելու երիտասարդներին կառուցողական բոլոր ծրագրերում:

ԿԳՄՍ նախարարության եւ Հրազդանի համայնքապետարանի միջեւ կնքվել է փոխըմբռնման հուշագիր: Հուշագրի նպատակն է խթանել Հրազդան քաղաքի զարգացումը, աջակցել երիտասարդների նախաձեռնություններին, նպաստել ենթակառուցվածքների զարգացմանն ու երիտասարդական կազմակերպությունների ծրագրերի իրականացմանը տեղական, հանրապետական եւ միջազգային մակարդակում:

Տոնական օրը եզրափակվել է համերգային ծրագրով: Միջոցառումները շարունակվելու են ամբողջ տարվա ընթացքում:

Բարի լուր

# Հայաստանի թիմը վաստակեց 6 մեդալ

Մաթեմատիկական միջազգային ուսանողական օլիմպիադային ՀՀ թիմի մասնակիցները նվաճել են 3 ոսկե, 2 արծաթե եւ 1 բրոնզե մեդալներ:

Օգոստոսի 1-7-ը հիբրիդային (առկա եւ առցանց) տարբերակով տեղի է ունեցել 29-րդ մաթեմատիկական միջազգային ուսանողական օլիմպիադան (International Mathematics Competition), որին մասնակցել են աշխարհի ավելի քան 100 համալսարանի թիմեր (667 ուսանողներ, որից 168-ը՝ առկա, 499-ը՝ առցանց):

Երեւանի պետական համալսարանից **Վահան Մարտիրոսյանը**, **Վահե Կարագուլյանը** եւ **Տիգրան Չթչյանն** արժանացել են ոսկե մեդալների, **Գագիկ Մելքումյանը**՝ արծաթե մեդալի, իսկ **Վաչագան Դիլանյանը**՝ բրոնզե մեդալի:

Հայ-ռուսական համալսարանից **Արման Ֆահրադյանն** արժանացել է արծաթե մեդալի:

Ուսանողական միջազգային օլիմպիադայի հայաստանյան թիմը ղեկավարել է **Կարեն Քեռյանը,** իսկ մարզել են Կարեն Քեռյանը, **Վազգեն Միքայելյանը, Ալբերտ Գեւորգյանը, Արման Բայրամյանը** եւ **Տիգրան Հակոբյանը:**

***Հ. Հ.***



# Հանդիպում *«Ռեֆորում»* ճամբար-աշխատաժողովի շրջանակում

Վանաձորում տեղակայված *«Ծիծեռնակ»* ճամբարում անցկացվել է *«Ռեֆորում»* ճամբար-աշխատաժողովը, որը կազմակերպել էին *«Եվրասիա համագործակցություն»* հիմնադրամը, *«Ռեստարտ»* հիմնադրամը եւ *«Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան»* հիմնադրամը: Ճամբարին մասնակցել են 150 ուսանողներ՝ ՀՀ ողջ տարածքից:

Աշխատաժողովի շրջանակում ՀՀ ԿԳՄՍՆ Երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ եւ շարունակական կրթության վարչության պետի պարտականությունները կատարող **Վերոնիկա Խորասանյանը** եւ Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության վարչության ծրագրերի իրականացման եւ գնահատման բաժնի պետ **Սյուզաննա Ղազարյանն** այցելել են ճամբարականներին: Նրանք ներկայացրել եւ մասնակիցների հետ քննարկել են երիտասարդական պետական քաղաքականության գերակա ուղղությունները եւ *«Բարձրագույն կրթության եւ գիտության մասին»* օրենքի նախագծով նախատեսվող փոփոխությունները, մասնավորապես, բուհերում ուսանողական ինքնակառավարման մարմինների ձեւավորման սկզբունքները ու մոտեցումները:

Խոսելով երիտասարդական պետական քաղաքականությունից՝ Վերոնիկա Խորասանյանը նշել է, որ այն առաջին հերթին միտված է երիտասարդական ներուժի բացահայտմանն ու իրացմանը, հնարավորությունների ու կարողունակությունների զարգացմանը, երիտասարդության ինքնադրսեւորման համար նպաստավոր միջավայրի ձեւավորմանը, որոշումների կայացման հարցում մասնակցային վարքագծի կերտմանը եւ այլն: Այս համատեքստում ԿԳՄՍՆ ներկայացուցիչը խոսել է երիտասարդության ոլորտում 2022 թվականի ընթացիկ եւ սպասվող միջոցառումների, ՀՀ կառավարության՝ 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների, պետական ֆինանսավորմամբ իրականացվող երիտասարդական դրամաշնորհային ծրագրերի եւ դրանց մասնակցության ընթացակարգի մասին:

Ծրագրերի իրականացման եւ գնահատման բաժնի պետ Սյուզաննա Ղազարյանի հետ քննարկման ժամանակ երիտասարդներն անդրադարձել են բուհերում կրթության կառավարման ձեւին, ուսումնառության կազմակերպմանը, արտերկրում սովորելու կրթական ծրագրերին դիմելու կարգին եւ հնարավորություններին, ինչպես նաեւ ՀՀ ԿԳՄՍՆ-ի կողմից՝ ուսանողական ինքնակառավարման մարմինների ձեւավորման վերաբերյալ որդեգրած մոտեցումներին:

Հանդիպումն անցել է ակտիվ հարցուպատասխանի ձեւաչափով. ճամբարականները բանախոսներին ուղղել են բազմաթիվ հարցեր եւ ստացել սպառիչ պատասխաններ:

*«Ռեֆորում»* ճամբար-աշխատաժողովն իրականացվում է *«ԵՄ-ն՝ հանուն երիտասարդների. ուսանողական ժողովրդավարություն հիմա»* ծրագրի շրջանակում՝ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:

Ճամբար-աշխատաժողովի նպատակն է ՀՀ պետական բուհերում ուսանողական ինքնակառավարման մարմինների կամ այլ կերպ ասած՝ ուսանողական այլընտրանքային միավորումների ձեւավորմանը նպաստելը՝ զարգացնելով ուսանողների հմտությունները երիտասարդական քաղաքականության մշակման, իրավունքների պաշտպանության եւ հանրային վերահսկողության ոլորտներում:

Մասնակիցների ընտրությունը կատարվել է բաց կանչի միջոցով՝ հիմնվելով դիմորդների լրացրած հայտադիմումների եւ հարցազրույցների արդյունքների վրա:

Ճամբար-աշխատաժողովի ընթացքում ուսանողները մշակելու են ծրագրեր, որոնցից 10-ը կֆինանսավորի *«Ռեստարտ»* հիմնադրամը:

***ՀԵՂԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***



Հայրենիք -Սփյուռք

# Մեկնարկել է 2022 թ. վերապատրաստման ծրագիրը



ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունում տեղի է ունեցել Հայաստանում սփյուռքահայ ուսուցիչների 2022 թվականի վերապատրաստման ծրագրի պաշտոնական մեկնարկը:

Այս տարվա ծրագիրն անցկացվում է համակցված (առկա եւ հեռավար) ձեւաչափով:

Ծրագրի մեկնարկի առիթով ԿԳՄՍ նախարարությունում հյուրընկալվել էին առկա վերապատրաստմանը մասնակցող *«Հայ մշակույթի պատմություն եւ արվեստ»* դասավանդող ուսուցիչները: Նրանց ընդունել է ԿԳՄՍ նախարարության արտաքին կապերի եւ սփյուռքի վարչության պետ **Արկադի Պապոյանը:** Ներկա են եղել նաեւ Սփյուռքի հետ կապերի բաժնի պետ **Կարեն Մնացականյանը** եւ բաժնի գլխավոր մասնագետ, ծրագրի աշխատանքները համակարգող **Թամարա Զալինյանը:** Ծրագրի մասնակից մյուս ուսուցիչները հանդիպմանը մասնակցել են հեռավար:

Արտաքին կապերի եւ սփյուռքի վարչության պետ Արկադի Պապոյանը շնորհակալություն է հայտնել ուսուցիչներին մասնակցության համար՝ ընդգծելով նրանց մասնագիտական կարողությունների կարեւորությունը հայապահպան գործունեության մեջ: Նա մանկավարժներին է փոխանցել ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանի շնորհավորական ուղերձը ծրագրի մեկնարկի կապակցությամբ:

Ուղերձում, մասնավորապես, ասվում էր. *«Հարգելի՛ մանկավարժներ, օգտագործելով այս առիթը՝ ցանկանում եմ դիմել ձեզ մեծարանքի խոսքերով, քանի որ դուք ձեր գիտելիքով, փորձով եւ նվիրվածությամբ կերտում եք հայ մարդուն ե՛ւ հայրենիքում, ե՛ւ Սփյուռքում: Կրթությունը կարեւոր դերակատարում ունի քաղաքական, տնտեսական, սոցիալական եւ էկոլոգիական բազմաթիվ խնդիրների լուծման, ինչպես նաեւ երկրի կայուն զարգացման ապահովման եւ բարեկեցիկ հասարակության կայացման գործում: Մենք ունենք այն վստահությունը, որ սփյուռքում մեծացող սերունդը կստեղծի նաեւ լրացուցիչ հնարավորություններ Հայաստանի համար՝ հարստացնելով հայ մշակույթի գանձարանը, ձեւավորելով ամուր կապ հայրենիքի եւ օտարերկրյա պետությունների ժողովուրդների միջեւ»*:

Ուղերձով նախարարը մանկավարժներին կոչ է արել լինել հետեւողական, օգտվել այլ տարածաշրջանների մանկավարժների հետ հաղորդակցվելու հնարավորությունից, քանի որ փորձի փոխանակումը եւ ընթացիկ աշխատանքային հարցերի համախորհուրդ լուծումն ինքնին մեծ զինանոց է արդյունավետ աշխատանքի համար:

Հանդիպմանն ուսուցիչները հնարավորություն են ունեցել բարձրաձայնելու իրենց մտահոգությունների, ակնկալիքների մասին: Նրանք ընդգծել են, որ անհամբեր կսպասեն նոր ուսումնական տարվան, որպեսզի իրենց ստացած նոր գիտելիքն ու հմտությունները փոխանցեն հայ մանուկներին:

Նշենք, որ Սփյուռքի ուսուցիչների 2022 թ. վերապատրաստման ծրագրին դիմել է 155 ուսուցիչ՝ 21 երկրից, որոնցից ընտրվել են 125-ը: Վերապատրաստումը նախատեսված է հետեւյալ ուղղություններով՝ յուրաքանչյուրը 120 դասաժամ.

*ա) Ուսուցում մանկապարտեզում,*

*բ) Ուսուցման մեկօրյա դպրոցում,*

*գ) Տարրական ուսուցում ամենօրյա դպրոցում,*

*դ) Հայոց լեզվի եւ գրականության դասավանդում,*

*ե) Հայոց պատմության դասավանդում,*

*զ) Հայ մշակույթի պատմության եւ արվեստի դասավանդում (առկա եւ հեռավար),*

*է) Տնօրենների վերապատրաստում:*

Առկա վերապատրաստմանը մասնակցում են *«Հայ մշակույթի պատմություն եւ արվեստ»* դասավանդող 19 մանկավարժներ, որոնց դասընթացները կտեւեն 15 օր՝ օգոստոսի 1-15-ը: Այդ օրերի ընթացքում նրանք ոչ միայն կլսեն դասախոսություններ, կանցկացնեն գործնական պարապմունքներ, այլեւ կայցելեն թանգարաններ, արվեստանոցներ, կմասնակցեն վարպետաց դասերի: Ուսումնական ծրագրի երկրորդ կեսը կշարունակվի օգոստոսի 15-30-ը՝ հեռավար ձեւաչափով: Մնացած խմբերում ընդգրկված ուսուցիչների վերապատրաստումը կանցկացվի միայն հեռավար:

Չնայած մնացած 6 խմբերում վերապատրաստման հեռավար բնույթին՝ այս ուսուցիչների համար եւս ընթացքում կազմակերպվելու են թանգարանների վիրտուալ այցելություններ, գործնական աշխատանքներ:

Վերապատրաստման ծրագիրն իրականացնում է *«Ֆիչըր»* կազմակերպությունը՝ համագործակցելով *«ՊրոԴեՖորմ»* կազմակերպության հետ:

Հավելենք, որ Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագիրը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ամենամյա պետական ծրագիր է, որն իրականացվում է 2000 թվականից:

Ծրագրի նպատակներն են գիտելիքի փոխանցումը, փորձի փոխանակումը եւ նոր կարողությունների ձեւավորումը: Այն ուղղված է նաեւ անձնական մակարդակում ուսուցչի մոտիվացիայի բարձրացմանը, առարկայի հանդեպ հետաքրքրության աշխուժացմանը, առկա կարծրատիպերի եւ մասնագիտական գիտակցության «տեղախախտմանըե, սփյուռքի կրթական համակարգի եւ Հայաստանի միջեւ կապի ամրապնդմանը:

Այս տարիների ընթացքում ծրագրով վերապատրաստվել է շուրջ 1100 ուսուցիչ՝ շուրջ 40 երկրից (Արգենտինա, Ուրուգվայ, ԱՄՆ, Աբխազիա, Բելառուս, Բուլղարիա, Ռուսաստան, Գերմանիա, Եգիպտոս, Թուրքիա, Ավստրիա, Ավստրալիա, Իրան, Իրաք, Քուվեյթ, Սիրիա, Լիբանան, Հունաստան, Ղազախստան, Ուկրաինա, Ֆրանսիա, Էստոնիա, Բրազիլիա, Կանադա, Բելգիա, ԱՄԷ, Իսպանիա, Շվեյցարիա, Վրաստան, Իսրայել, Ռումինիա, Լիտվա, Լատվիա, Դանիա, Շվեդիա, Կիպրոս, Չեխիա, Նիդեռլանդներ):

# կրթական խորհրդաժողովին ընդհառաջ

Կրթության ոլորտում Հայաստան-Սփյուռք համագործակցության ամրապնդման նպատակով ՀՀ կառավարության որոշմամբ տրամադրվել է շուրջ 15,7 մլն դրամ՝ Համահայկական կրթական խորհրդաժողովի կազմակերպման համար:

Օգոստոսի երկրորդ կեսին անցկացվելիք խորհրդաժողովին կմասնակցեն շուրջ 130 պատվիրակներ՝ Հայաստանից, Արցախից եւ Սփյուռքից:

Այս տարի խորհրդաժողովում անդրադարձ կկատարվի վերջին տարիներին Սփյուռքում կրթության գործընթացի կազմակերպման եւ զարգացման նոր միտումներին, հայապահպանության հիմնախնդիրներին, ինչպես նաեւ հեռավար կրթության կազմակերպման հարցերին: Խորհրդաժողովին կներկայացվեն հայերենի եւ հայրենագիտության ուսուցման նոր մեթոդները, ստեղծված ուսումնական ծրագրերը եւ դասագրքերը: Այս անգամ խորհրդաժողովում կքննարկվեն նաեւ արտերկրի բուհերում հայերենի դասավանդման խնդիրները:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը Համահայկական կրթական խորհրդաժողովները կազնակերպում է երկու տարին մեկ: Առաջին խորհրդաժողովը կայացել է 2004 թվականին, որին մասնակցել են Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի 25 երկրների 125 ներկայացուցիչներ:

Խորհրդաժողովները նպատակ ունեն քննարկելու արտերկրում հայկական կրթօջախների առկա հիմնահարցերը, հստակեցնելու կրթության ոլորտում Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման եւ համագործակցության զարգացման հաջորդական քայլերը:

Համախմբվելով ընդհանուր օրակարգի շուրջ՝ տարբեր երկրներից եկած պատվիրակներն աշխատում են միեւնույն թեմատիկ աշխատախմբերում՝ փոխանակելով իրենց համայնքային փորձը, ներկայացնելով ծրագրերը, ծանոթանալով Հայաստանում մշակված եւ իրագործվող ուսումնական ծրագրերին ու մանկավարժական ձեռքբերումներին:

Քննարկումների հիման վրա խորհրդաժողովներում ընդունվում է բանաձեւ, որն ուղղորդիչ է դառնում մոտակա երկու տարիների աշխատանքի ուղղությունները սահմանելու համար: Խորհրդաժողովներում մշակված շատ մոտեցումներ հետագայում դրվել են նոր միջոցառումների հայեցակարգերի մշակման, կազմակերպման եւ անցկացման հիմքում: Խորհրդաժողովում կարող են ընդունվել նաեւ հայտարարություններ:

Համատեղ քննարկումները հնարավորություն են ընձեռում նաեւ գնահատելու ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից իրագործվող ծրագրերի արդյունավետությունը՝ աջակցությունն առավել առարկայական եւ նպատակային դարձնելու համար:

# հայագիտական օլիմպիադա

ՀՀ կառավարության որոշմամբ՝ տրամադրվել է 10,8 մլն դրամ՝ Համահայկական հայագիտական օլիմպիադայի կազմակերպման համար:

Օգոստոսի առաջին կեսին անցկացվելիք օլիմպիադային կմասնակցեն շուրջ 90 պատվիրակներ՝ Հայաստանից, Արցախից եւ Սփյուռքից:

Համահայկական հայագիտական օլիմպիադաները 2003 թվականից պետական ծրագրերի շրջանակում երկու տարին մեկ կազմակերպվող միջոցառումներն են, որոնք խնդիր ունեն խրախուսելու հայոց լեզվի, գրականության, պատմության եւ մշակույթի իմացությունն արտերկրում բնակվող հայ երեխաների շրջանում, օգնելու նրանց ճանաչել Հայաստանը եւ ամուր կապվել հայրենիքին, ինչպես նաեւ ծանոթանալու տարբեր երկրներում բնակվող հասակակիցների հետ:

2003 թվականին նախարարությունն առաջին անգամ կազմակերպել է Հայոց լեզվի եւ գրականության համահայկական օլիմպիադան, որն իր շուրջն է հավաքել Սփյուռքի 4 երկրների եւ ՀՀ ընդամենը 29 դպրոցականների:

2005 թվականին օլիմպիադային մասնակցել է արդեն 105 երիտասարդ՝ 7 երկրից: Նույն տարում միջոցառման շրջանակում անցկացվել է Հայագիտական գիտելիքների մրցույթը, եւ մասնակիցների ընդհանուր թիվը հասել է 150-ի: 2015 թվականից միջոցառումը ստացել է *«Հայագիտական համահայկական օլիմպիադա»* անվանումը:

Օլիմպիադային մասնակցում են հայկական կրթօջախների՝ 14-18 տարեկան համապատասխան գիտելիքներ ունեցող սաները:

Միջոցառման առանձնահատկություններից է նաեւ այն, որ մասնակցության հնարավորություն է տրվում այն պատանիներին, որոնք չեն տիրապետում հայերենին, բայց ունեն բավարար գիտելիքներ հայոց պատմությունից եւ մշակույթից: Դա հնարավորություն է տալիս միջոցառմանը մասնակից դարձնելու հայերենին չտիրապետող ավելի լայն՝ համայնքի հետ համեմատաբար թույլ կապ ունեցող հայկական շրջանակներին, ինչպես նաեւ Հայաստանով հետաքրքրվող օտարազգի ներկայացուցիչներին:

Միջոցառումը, որպես կանոն, տեւում է 1 շաբաթ, որի ընթացքում, բացի հիմնական մրցույթներից, անցկացվում են բազմաթիվ լրացուցիչ մրցույթներ, օրինակ՝ հայրենասիրական երգի, ասմունքի եւ այլն: Երիտասարդների համար կազմակերպվում են այցելություններ Հայաստանի տեսարժան վայրեր, ճանաչողական այցեր, հանդիպումներ տարբեր ոլորտների հայտնի գործիչների հետ, ուսուցողական միջոցառումներ (պարի ուսուցում, երգի ուսուցում, ժողովրդական արվեստների ուսուցում եւ այլն):

***ՀԵՂԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

Ասուլիս

# Ամփոփվել են ընդունելության քննությունների արդյունքները

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետ **Լուսինե Գրիգորյանն** *«Արմենպրես»* լրատվական գործակալությունում կայացած մամուլի ասուլիսում ներկայացրել է 2022-2023 ուսումնական տարվա բուհերի ընդունելության քննությունների արդյունքները, ամփոփիչ տվյալները, անդրադարձել հեռակա ուսուցմամբ ընդունելության կարգի փոփոխությանը:



## 2022-2023 ուստարվա բուհերի ընդունելության արդյունքներ, թվային տվյալներ

ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետ Լուսինե Գրիգորյանի իրազեկմամբ` 2022-2023 ուստարվա ընդունելության քննությունները ավարտվել են. ամփոփվել են հիմնական եւ լրացուցիչ փուլերը:

*«Այս տարի եւս կիրառվել է «մեկ բուհ, մեկ մասնագիտություն» սկզբունքը, ինչը նշանակում է` դիմորդն առաջին փուլում հայտագրում է մեկ բուհ եւ իր նախընտրած մեկ մասնագիտությունը: Դրական միավորներ հավաքած, սակայն հիմնական փուլը չհաղթահարած դիմորդներին լրացուցիչ փուլով հնարավորություն է տրվում դիմելու եւ համալրելու թափուր մնացած տեղերը:*

*Այս տարի միասնական քննությունները բոլոր բուհերում սահմանված են եղել միասնական չափանիշներով` 2 միասնական քննության պարտադիր պահանջով, ինչպես նաեւ նույն մասնագիտությունների համար նույն մուտքային պայմաններով»,*- ներկայացրել է ԿԳՄՍՆ ներկայացուցիչը:

Բանախոսը ներկայացրել է այս տարվա ընդունելության քննությունների ընդհանուր պատկերը` վիճակագրական տվյալներով: Բուհերին հատկացված էր 22.000 տեղ` պայմանավորված ՀՀ-ում գործող բուհերի լիցենզավորված տեղերի քանակով: Այս տարի հայտագրված դիմորդների թիվն էր` 13.887, որից միասնական քննություններին մասնակցել է 11.587-ը, բուհ ընդունվել է 9729 դիմորդ, որից 1670-ը` անվճար:

Թափուր է մնացել 14.158 տեղ, որից 13.900` վճարովի, 258-ը` անվճար:

Ըստ բանախոսի` թափուր տեղերը հիմնականում ոչ պետական բուհերում են, որոնց հատկացված է եղել 7500 տեղ, որից համալրվել է 131-ը:

Լ. Գրիգորյանի գնահատմամբ` թափուր տեղերի թիվը պայմանավորված է նաեւ այս տարվա միասնական քննությունների 2 քննության պահանջով:

## Թափուր տեղեր. ինչո՞ւ շուկայում բարձր պահանջարկ ունեցող մասնագիտությունները գրավիչ չեն

*«Ինչպես նախորդ տարիներին, այս տարի եւս ամենաշատ դիմորդների թվով առաջնագծում էին մի քանի հիմնական մասնագիտություններ` Իրավագիտություն, Բուժական գործ, Միջազգային հարաբերություններ, Հանրային կառավարում, Կիրառական մաթեմատիկա եւ այլն: Նախորդ տարվա համեմատ կրկին թափուր են մնացել մասնագիտություններ, որոնք աշխատաշուկայում պահանջարկ ունեն, առաջնային են, սակայն ցածր գրավչություն ունեն եւ նույնիսկ անվճար տեղերի համար դիմողներ չեն եղել: Դրանք հիմնականում բնագիտական մասնագիտություններն են` Քիմիա, Աշխարհագրություն, Երկրաբանություն, Քիմիական տեխնոլոգիաներ»,*- իրազեկել է Լուսինե Գրիգորյանը` ավելացնելով, որ հումանիտար-հասարակագիտական մասնագիտությունների ոլորտում եւս թափուր տեղեր կան: Նա առանձնացրել է Մանկավարժական համալսարանում Սուրդոմանկավարժություն, Մշակութաբանություն, Գրադարանային տեղեկատվական աղբյուրներ եւ այլ մասնագիտությունները:

Պատկերն ընդհանրական է գրեթե բոլոր բուհերի համար:

*«Ագրարային համալսարանում այս տարի ընդունվել է 40 դիմորդ: Թափուր տեղերը գերակշռում են այնպիսի մասնագիտություններում, ինչպիսիք են` Մեքենասարքավորումների ճարտարագիտություն, Հողային եւ ջրային ռեսուրսների ճարտարագիտություն, Պարենամթերքի տեխնոլոգիա, Կենդանագիտություն եւ այլն»,*- ասել է բանախոսը:

Տնտեսության կարիքների հիմքով` որոշակի վերլուծություններ են արվել Էկոնոմիկայի ու Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություններում` տարորոշելու շուկայի պահանջարկը: Արդյունքում` թվարկված մասնագիտությունները պահանջված են, բայց դիմորդներին չեն գրավում:

Մյուս կողմից ԲՏԱ նախարարության հետ աշխատելիս պարզ է դառնում, որ չնայած այդ ոլորտում մեծաքանակ դիմորդների` բազմաթիվ աշխատատեղեր կան:

*«Պատճառներն առանձին չեն ուսումնասիրվել, բայց փորձում ենք այլ գերատեսչությունների հետ որոշակի վերլուծություն ունենալ` վեր հանելու դրանք, հասկանալու` ինչու թվարկված մասնագիտությունները չեն համալրվում: Հիմնական պատճառներից են իրազեկվածության ցածր մակարդակը, վերջնարդյունքների մասին հանրակրթական դպրոցներում տեղեկացվածության պակասը, բուհերի կրթական ծրագրերի մասին տեղեկության բացակայությունը: Այս առումով մեծ աշխատանք ունեն անելու թե` բուհերը, թե` գործատուները»,*- ասել է բանախոսը:

Նա հավելել է, որ Ագրարարային համալսարանում, օրինակ, ենթակառուցվածքները բարելավվել են, կան նոր լաբորատորիաներ, սակայն ցածր իրազեկվածության պատճառով դիմորդները քիչ են:

Այն հարցին, թե արդյոք թափուր տեղերը պայմանավորված են բարձր վարձավճարներով, Գրիգորյանը տեղեկացրել է, որ էական բարձրացումներ չեն եղել` հատկապես բնագիտական մասնագիտություններում: Ի լրումն` նա նշել է, որ անցած տարվա համեմատ դիմորդների թիվն աճել է:

Ըստ Լուսինե Գրիգորյանի` այսօր կրթական քաղաքականության առանցքում է դպրոցներում մասնագիտական կողմնորոշմանն ուղղված գործընթացի իրականացումը, դպրոց-բուհ կապի ամրապնդումը` լուսաբանելու` ինչպիսի հնարավորություն է տալիս աշխատաշուկան տվյալ մասնագիտությամբ թեկուզ վարձատրության առումով: Նրա գնահատմամբ` հետագայում բարձր աշխատավարձ ունենալու մղումն է նաեւ կանխորոշում մասնագիտական ընտրությունը:

Այս իրավիճակում ԿԳՄՍ նախարարությունը շահագրգիռ դերում է: *«ՀՀ կրթության մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագրումե,* որը հաստատվել է ՀՀ կառավարության նիստում, մանրամասն նկարագրված է ներկա վիճակը եւ կրթության որակը բարելավող քայլերը: Ազգային ժողովի կողմից օրենքի նախագիծն ընդունվելու դեպքում դրան հետեւելու է գործողությունների ծրագրի իրականացումն առանձին քայլերով եւ ժամկետներով:

Էկոնոմիկայի նախարարությունը եւս ռազմավարություն է մշակում` ուղղված տնտեսության եւ գյուղատնտեսության զարգացմանը, որտեղ դեր ունի նաեւ ԿԳՄՍ-ն:

## Հեռակա ընդունելության կարգի փոփոխություն

Ըստ բանախոսի` ներկայացված նախագծով առաջարկվում է բուհերում հեռակա ընդունելությունն իրականացնել նույն` միասնական մոտեցմամբ, որը կիրառվել է առկա ուսուցման ընդունելության ժամանակ: Ըստ այդմ` առաջարկվում է հայտագրման, փաստաթղթերի ներկայացման (այդ թվում` համապատասխան կայքի միջոցով առցանց տարբերակով), ընդունելության քննությունների եւ մրցույթի անցկացման գործառույթը փոխանցել ԳԹԿ-ին: Մինչ այս պահը քննությունն անցկացնում էր բուհը, հին կարգով նախատեսվում էր համագործակցություն ԳԹԿ-ի հետ, թեստերի բովանդակային մասով որեւէ բան չի փոխվել, միայն կազմակերպչական հարցերում:

Փոփոխությունները հիմնականում վերաբերում են ընդունելության քննությունների եւ մասնագիտությունների հայտագրման գործընթացին, կազմակերպչական, անցկացման ժամկետներին եւ հայտագրման եղանակին: Նախորդ կարգավորումներով դիմորդները քննություններին, ինչպես նաեւ մասնագիտությունների մրցույթին մասնակցելու համար ընդունելության դիմում-հայտերը եւ փաստաթղթերը հանձնում են համապատասխան բուհում: Փոփոխությունները պայմանավորված են բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումներով եւ միասնական մոտեցում ձեւավորելու մոտեցմամբ:

Ակնկալվում է, որ նոր կարգավորումը գործընթացն առավել արդյունավետ եւ կանոնակարգված դարձնելու հնարավորություն կտա:

***ՀԵՂԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

# Առարկայական միջազգային օլիմպիադաներ

## 1 արծաթե եւ 3 բրոնզե մեդալ` Քիմիայի միջազգային օլիմպիադայից

Տեղի է ունեցել Քիմիայի 54-րդ միջազգային օլիմպիադան, որի կազմակերպիչ երկիրը Չինաստանն էր: Հայաստանի թիմի 4 մասնակիցները ցուցաբերել են բարձր արդյունքներ` նվաճելով 1 արծաթե եւ 3 բրոնզե մեդալներ:

Հայաստանի աշակերտական թիմի անդամ, *«Քվանտ»* վարժարանի 11-րդ դասարանի աշակերտ **Լեոնիդ Ասատրյանը** նվաճել է արծաթե մեդալ:

12-րդ դասարանի աշակերտներ **Հայկ Աղեկյանը** (*«Հերացի»* ավագ դպրոց), **Սոնա Սաղեյանը** (*«Քվանտ»* վարժարան) եւ **Տիգրան Հարությունյանը** (Արագածոտնի մարզ, Նորաշենի միջնակարգ դպրոց) ստացել են բրոնզե մեդալներ: Թիմը ղեկավարել են **Անդրանիկ Դավինյանը** (Երեւանի պետական բժշկական համալսարան) եւ **Արմեն Գալստյանը** (Երեւանի պետական համալսարան):

Քիմիայի 54-րդ միջազգային օլիմպիադային (պաշտոնական կայքը` https://icho2022.cn) մասնակցել են 84 երկրների 326 աշակերտներ, գիտելիքի ստուգումն անցկացվել է առցանց ձեւաչափով` մեկ (տեսական) փուլով, առցանց մասնակցությունն ապահովել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը:

Հիշեցնենք, որ Քիմիայի 53-րդ միջազգային օլիմպիադայում, որը նույնպես անցկացվել էր առցանց ձեւաչափով, Հայաստանի թիմը նվաճել էր 3 բրոնզե մեդալ:

## 3 բրոնզե մեդալ եւ 2 գովասանագիր Ֆիզիկայի միջազգային օլիմպիադայից

Առցանց ձեւաչափով է անցկացվել նաեւ Ֆիզիկայի 52-րդ միջազգային օլիմպիադան: Հայաստանի թիմը, որի կազմում ընդգրկված էին 5 աշակերտներ, նվաճել է 3 բրոնզե մեդալ: Մասնակիցներից երկուսն արժանացել են գովասանագրերի:

Ֆիզիկայի 52-րդ միջազգային օլիմպիադային մասնակցել են 79 երկրների ավելի քան 300 աշակերտներ: Հայաստանյան թիմից բրոնզե մեդալների են արժանացել Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (ՀԱՊՀ) ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ **Արտաշես Մկրտչյանը,** Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտներ **Մարիա Առաքելյանը** եւ **Արեգ Բարսեղյանը:** ՀԱՊՀ-ի ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ **Հովսեփ Կարապետյանը** եւ Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ **Վյաչեսլավ Պետրոսյանը** ստացել են գովասանագիր:

Թիմը ղեկավարել են **Գագիկ Գրիգորյանը** (*«ԱՅԲ»* դպրոց, Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց) եւ **Բիլոր Կուրղինյանը** (Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց):

Օլիմպիադան անցկացվել է երկու` փորձնական եւ տեսական փուլերով, առցանց մասնակցությունն ապահովել է Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցը: Ֆիզիկայի 52-րդ միջազգային օլիմպիադայի (պաշտոնական կայքը` ipho2022.com) կազմակերպիչ երկիրը Շվեյցարիան է:

Հիշեցնենք, որ *«Ֆիզիկա»* առարկայի նախորդ` 51-րդ միջազգային օլիմպիադայում, որը նույնպես անցկացվել էր առցանց ձեւաչափով, Հայաստանի թիմն արժանացել էր 1 ոսկե, 1 արծաթե եւ 2 բրոնզե մեդալների:

## Մաթեմատիկայի միջազգային օլիմպիադայում ՀՀ թիմը նվաճել է 6 մեդալ

ՀՀ դպրոցականները 2 արծաթե եւ 4 բրոնզե մեդալ են նվաճել *«Մաթեմատիկա»* առարկայի 63-րդ միջազգային օլիմպիադայում:

Օլիմպիադան, որի կազմակերպիչ երկիրը Նորվեգիան էր, երկու տեսական փուլերով եւ առկա ձեւաչափով անցկացվել է Օսլո քաղաքում: Օլիմպիադային մասնակցել է 104 երկրի 589 աշակերտ:

Հայաստանի թիմը ներկայացրել է 6 աշակերտ` 5-ը Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցից, իսկ մեկը` *«Քվանտ»* վարժարանից: Ֆիզմաթ հատուկ դպրոցի սաներ **Վահագն Հովհաննիսյանը** եւ **Ռուբեն Համբարձումյանն** արժանացել են արծաթե, իսկ նույն դպրոցի աշակերտներ **Հայկ Կարապետյանը, Վահրամ Ասատրյանն** ու **Արեգ Մկրտչյանը,** ինչպես նաեւ *«Քվանտ»* վարժարանի սան **Արայիկ Խալաթյանը`** բրոնզե մեդալների: Թիմային հաշվարկում մեր թիմը զբաղեցրել է 26-րդ հորիզոնականը:

Հայաստանի թիմը ղեկավարել են **Սմբատ Գոգյանը** (ԳԱԱ) եւ **Գուրգեն Ասատրյանը** (ՀՊՄՀ):

Մաթեմատիկայի 62-րդ միջազգային օլիմպիադայում, որն անցկացվում էր առցանց ձեւաչափով, Հայաստանի թիմն արժանացել էր 2 արծաթե եւ 3 բրոնզե մեդալների:

Մաթեմատիկայի միջազգային օլիմպիադայի պաշտոնական կայքը` https://www.imo-official.org/:

***Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

Համաժողով

## ՄԿՈՒ հաստատություններում որակի ապահովման համակարգի զարգացում




Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի (ՈԱԱԿ) նախաձեռնությամբ Հայաստանի ամերիկյան համալսարանում այսօր տեղի է ունեցել համաժողով՝ նվիրված միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում որակի ապահովման համակարգի զարգացմանը:

Միջոցառման նպատակն էր քոլեջների ներկայացուցիչների եւ շահակիցների հետ քննարկել հավատարմագրման գործընթացի ազդեցությունը միջին մասնագիտական ուսումնական հաստատատությունների զարգացման գործում:

Համաժողովի մասնակիցներին ողջունել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը**՝ նշելով, որ մասնագիտական կրթության եւ ուսուցման ոլորտը նախարարության կարեւորագույն ուղղություններից մեկն էգ *«Ինչպես գիտեք, ներկայում քննարկման փուլում է գտնվում Կրթության զարգացման պետական ծրագիրը՝ մինչեւ 2030 թ. համար, որտեղ առանձնահատուկ շեշտադրում կա մասնագիտական կրթության եւ ուսուցման ոլորտին եւ դրա կարեւորությանը: Մասնավորապես, սահմանվել է հստակ թիրախ, համաձայն որի՝ մասնագիտական կրթության եւ ուսուցման ոլորտի հաստատությունների շրջանավարտների առնազն 90%-ը պետք է աշխատանք գտնի իր մասնագիտությամբ: Սա խիստ հավակնոտ թիրախ է, որը մեր առջեւ դնում է լուրջ մարտահրավերներ, որոնք առաջին հերթին գործում են որակի ապահովման դաշտում»*,- նշել է փոխնախարարը:

Նրա խոսքով՝ այդ մարտահրավերների հաղթահարման եղանակներից մեկը հաստատությունների հավատարմագրումն է եւ որակի ապահովման համակարգերի ստեղծումն ու զարգացումը, քանի որ դրանք օգնում են համակարգային խնդիրները վեր հանել եւ լուծել: Ժաննա Անդրեասյանը շեշտել է՝ այս հարցում անհրաժեշտ են արագ լուծումներ, որոնք կապված են ոչ միայն հավատարմագրման գործընթացի, այլ նաեւ հաստատությունների կարողությունների եւ մասնագիտական ներուժի զարգացման հետ: Նա փաստել է՝ խնդիրների հաղթահարման համար առկա են բոլոր նախադրյալները՝ համապատասխան օրենսդրական կարգավորումների տեսքով:

Ըստ փոխնախարարի՝ այս գործում իր նշանակալի նպաստը կբերի մասնագիտական կրթության եւ ուսուցման օրենքի նախագիծը, որը նոր հեռանկարներ կբացի ՄԿՈՒ ոլորտի զարգացման համար:

*«Մենք աշխատում ենք Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի հետ եւ դիտարկում ենք՝ ինչպիսի նրբություններ ու առանձնահատկություններ կան հավատարմագրման գործընթացում, որպեսզի հետագա գործընթացները լինեն ավելի թիրախային»*,- նշել է Ժաննա Անդրեասյանը՝ հավաստիացնելով, որ նախարարությունն իր հետագա աշխատանքներում հաշվի կառնի համաժողովի ընթացքում հնչած բոլոր կարեւոր առաջարկները:

Համաժողովի մասնակիցներին ողջունել է նաեւ ՈԱԱԿ-ի տնօրեն **Ռուբեն Թոփչյանը:**

Ելույթներից հետո շահակիցների հետ տեղի են ունեցել պանելային քննարկումներ, որոնց ընթացքում անդրադարձ է եղել արտաքին գնահատման գործընթացների արդյունքներին եւ առկա մարտահրավերներին՝ կառավարման բարձր օղակների եւ որակի ապահովման պատասխանատուների տեսանկյունից: Քննարկվել են նաեւ փորձագիտական կարողությունների ձեւավորումը ՀՀ-ում ու դրա ներգործությունը միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման համակարգի վրա:

Պանելային քննարկումներին հաջորդել է միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների համար Էրազմուս+ ծրագրերի հնարավորությունների եւ պահանջների ներկայացումը Հայաստանում:

Հանրային քննարկում

## Դպրոցների սովորողների տնային ուսուցման կարգի նախագիծ

ՀՀ կրթության, գիտության մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների տնային ուսուցման կարգի նախագիծը:

Նախագծի նպատակն է հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում հաշվառված եւ առողջական վիճակի պատճառով դպրոց հաճախել չկարողացող, հետեւաբար՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների (ԿԱՊԿ) ուսումնառությունը տնային, հիվանդանոցային, մանկատնային պայմաններում ապահովելը:

Համաձայն նախագծի՝ սովորողների համար տնային ուսուցումը կազմակերպում է այն ուսհաստատությունը, որտեղ հաշվառված է սովորողը: Այն կարող է իրականացվել հեռավար ուսուցման ձեւով՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի՝ 2020 թվականի մայիսի 20-ի թիվ 09 հրամանի համաձայն:

Տնային ուսուցման իրավունք վերապահող հիվանդությունների ցանկը սահմանում է ՀՀ կառավարությունը: Տնային ուսուցման կազմակերպման համար հիմք են համարվում բժշկական հաստատության տված եզրակացությունը, սովորողի ծնողի (օրինական ներկայացուցչի) գրավոր դիմումը եւ ծնողի ու հաստատության միջեւ կնքված պայմանագիրը (նախագծում առկա են ձեւաթղթերը):

Տնային ուսուցում կազմակերպելու համար պայմանագիրը կնքվում է առավելագույնը երկու տարի ժամկետով, կարող է երկարաձգվել միայն հաստատության մանկավարժական խորհրդի որոշման եւ բժշկական եզրակացության հիման վրա: Սովորողների համար տնային ուսուցումը կազմակերպվում է՝ ուսումնական պլանների, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար՝ անհատական ուսուցման պլանի համաձայն:



Տնային պայմաններում սովորողին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցությունն իրականացվում է դպրոցի եւ Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժահոգեբանական աջակցության թիմի մասնագետների կողմից՝ համաձայն ԱՈՒՊ-ի:

Հաստատությունն ուսման ընթացքում սովորողին անվճար տրամադրում է դպրոցի գրադարանային ֆոնդում առկա դասագրքեր/ուսումնաօժանդակ նյութեր, ապահովում է սովորողների ուսումնառության իրականացումը տանը՝ ներառյալ էլեկտրոնային ուսուցման եւ հեռավար ուսուցման տեխնոլոգիաների կիրառումը, իրականացնում է սովորողի ուսումնական առաջադիմության ընթացիկ գնահատում, ամփոփիչ ստուգում, ատեստավորում եւ սովորողի փոխադրում հաջորդ դասարան եւ այլն:

Տնային ուսուցումը կազմակերպվում է պետական բյուջեով՝ ուսհաստատությանը հատկացված ֆինանսական միջոցների հաշվին:

Տնային ուսուցման կազմակերպումը կրում է ժամանակավոր բնույթ, եւ այդ ժամանակահատվածում դպրոցն իրականացնում է նախապատրաստական աշխատանքներ՝ սովորողին դասարանային պայմաններում կրթության մեջ ընդգրկելու համար:

Այսպիսով, սովորողների տնային ուսուցման կարգը թույլ կտա կարգով առանձնացված դեպքերում սովորողների ուսուցումն իրականացնել տնային պայմաններում՝ անհատական ուսուցմամբ, որն էլ կնպաստի նշված սովորողների կրթության իրավունքի իրականացմանը՝ ապահովելով կրթության շարունակականությունը:

## Դպրոցի զարգացման ծրագրի մշակման ձեւաչափ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձեւաչափի եւ զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշների ու պահանջների նախագիծը: Ծրագիրը հաստատության ռազմավարական փաստաթուղթն է, որի հիման վրա պլանավորվում է աշխատանքը հաստատությունում:

Նախագծի նպատակը զարգացման ծրագրի՝ որպես գործիքի կիրառության արդյունավետության բարձրացումն է եւ ծրագրի կատարման ընթացքի վերահսկողության առավել հստակ մեխանիզմների ամրագրումը: Այն թույլ կտա բարձրացնել զարգացման ծրագրի կարեւորությունը, որը ներկայում հաճախ կրում է զուտ ձեւական բնույթի պահանջ, ինչպես նաեւ հավասարակշռություն կմտցնի պետական լիազորված մարմնի կողմից տնօրենի նշանակման գործառույթում՝ իբրեւ վերահսկող մարմնի:

Իրավական ակտի նախագծով ներկայացվում են հաստատության ռազմավարական փաստաթուղթ հանդիսացող զարգացման ծրագրի կազմման համար անհրաժեշտ բաղադրիչները, մշակման պարտադիր քայլերը, մեթոդական ցուցումները, զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները:

Ծրագիրը կազմվում է 5 տարվա համար եւ ընդգրկում է հետեւյալ բաղադրիչները՝ իրավիճակի վերլուծություն, նպատակների եւ խնդիրների սահմանում, դրանց իրականացումն ապահովող գործողությունների եւ միջոցառումների ժամանակացույց, պատասխանատուներ, արդյունքների գնահատման չափանիշներ, ռիսկեր, բյուջե եւ վերահսկողության մեխանիզմներ:

Համաձայն նախագծի՝ հաստատության զարգացման ուղղությունները պետք է առանձնացնել երկու հիմնական խմբի՝ հանրակրթության ոլորտի օրենսդրությամբ հաստատության համար սահմանված նպատակների եւ խնդիրների իրականացման ուղղություններ եւ հանրակրթական այլընտրանքային (միջազգային, փորձարարական, հեղինակային) ծրագրերով հաստատության կողմից իրականացվող բովանդակային, կրթական տեխնոլոգիաների օգտագործմամբ կամ նորարարական ուղղություններ:

Նախագծով առաջարկվում է ծրագրի իրականացման վերահսկողությունն իրականացնել՝ հաստատության գործունեության տարեկան աշխատանքային պլանի կատարման մասին հաշվետվության հիման վրա:

Այսպիսով, նախագծի ընդունման պարագայում ուսհաստատության տնօրենի պաշտոնի հավակնորդները հստակ կպատկերացնեն զարգացման ծրագրի մշակման պահանջները եւ կկարողանան մշակել դպրոցի զարգացման ծրագիրը՝ հաշվի առնելով տվյալ հաստատության առանձնահատկությունները, իրականացնել անհրաժեշտ ուսումնասիրություն եւ վերլուծություն՝ դպրոցի իրական վիճակը, մարտահրավերները եւ խնդիրները գնահատելու համար:

***ՀԵՂԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

Հայ-սիրիական

# Համագործակցության նոր հեռանկարներ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանն** ընդունել է Սիրիայի Արաբական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան **Նորա Արիսյանին:**

Վահրամ Դումանյանը շնորհավորել է Նորա Արիսյանին՝ դեսպանի պաշտոնը ստանձնելու կապակցությամբ եւ վստահություն հայտնել, որ նա իր դիվանագիտական գործունեությունը կծառայեցնի հայ-սիրիական հարաբերությունների շարունակական զարգացմանն ու փոխշահավետ համագործակցության ընդլայնմանը:

Նախարարը կարեւորել է փոխադարձ վստահության վրա հիմնված երկու ժողովուրդների ավանդական եւ բարեկամական կապերը: Այդ համատեքստում Վահրամ Դումանյանը ցավով փաստել է, որ որոշ հանգամանքներով պայմանավորված՝ երկու երկրների միջեւ նախատեսվելիք համագործակցության փաստաթղթերի ստորագրման գործընթացը դանդաղել է՝ վերահաստատելով այն վերսկսելու անհրաժեշտությունը:



Նախարարն առաջարկել է դիտարկել փոխհամագործակցության ծրագրերի իրականացման հնարավորությունը կրթության, գիտության եւ մշակույթի ոլորտներում, մասնավորապես վերսկսել *«ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ Սիրիայի Արաբական Հանրապետության բարձրագույն կրթության նախարարության միջեւ կրթության եւ գիտության բնագավառում 2022-2027 թթ. համար համագործակցության մասին»* ծրագրի ստորագրման համար սահմանված գործընթացը: Վահրամ Դումանյանն անդրադարձել է նաեւ *«ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ Սիրիայի Արաբական Հանրապետության մշակույթի նախարարության միջեւ 2023-2025 թթ. համագործակցության մասին»* ծրագիրը ստորագրելու հնարավորությանը:

Նախարարը կարեւորել է Դամասկոսի համալսարանի հայագիտական բաժնի գործունեությունը եւ համատեղ ծրագրեր իրականացնելու հնարավորությունը, ինչպես նաեւ առաջարկել է դիտարկել ՀՀ քաղաքացիների համար Հալեպի համալսարանում արաբերենի ուսուցումը վերսկսելու հնարավորությունը: Վահրամ Դումանյանը դեսպանին առաջարկել է զարգացնել ՀՀ բուհերում արաբագիտության ամբիոնների եւ Սիրիայի Արաբական Հանրապետության բուհերում հայագիտության ամբիոնների գործունեությունը եւ փոխգործակցությունը: Այս համատեքստում նախարարն ընդգծել է, որ ՀՀ բուհերում ներկայում սովորում են Սիրիայի 282 քաղաքացիներ, որոնցից 270-ը ազգությամբ հայեր են:

Վահրամ Դումանյանն անդրադարձել է նաեւ 2020 թվականին Արցախի դեմ ռազմական ագրեսիայի հետեւանքով Ադրբեջանի վերահսկողության ներքո անցած հայկական մշակութային ժառանգության հետագա պահպանության հարցերին՝ ընդգծելով, որ պետք է ջանքեր չխնայել, որպեսզի Ադրբեջանը զերծ մնա հայկական պատմական հուշարձանները ոչնչացնելուց եւ դրանց ծագումն աղավաղելուց:

Դեսպան Նորա Արիսյանը նշել է, որ իր պաշտոնավարումը համընկել է երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակի հետ, որի շրջանակում նախատեսվում են մի շարք կարեւոր միջոցառումներ: Նա վերահաստատել է ՀՀ-ի եւ Սիրիայի միջեւ համագործակցության խորացման եւ նոր ծրագրերի իրականացման պատրաստակամությունը՝ հիմնվելով երկու ժողովուրդների դարավոր բարեկամական հարաբերությունների վրա:

Դեսպանը շեշտել է, որ մեծապես գնահատում է հայկական մշակույթը՝ հույս հայտնելով, որ հայ արվեստագետներն իրենց փորձառությամբ կկիսվեն սիրիացի գործընկերների հետ: Նորա Արիսյանն անդրադարձել է նաեւ կրթության ոլորտում համագործակցությանը, մասնավորապես՝ ԵՊՀ-ում արաբագիտության զարգացման եւ Սիրիայում հայ ուսանողների կրթության կազմակերպման հարցերին: Դեսպանը կարեւորել է նաեւ երկու երկրների միջեւ գիտության ոլորտում համագործակցությունը եւ դասախոսների ու գիտնականների փոխադարձ այցերի կազմակերպումը:

Վահրամ Դումանյանը դեսպանին հրավիրել է՝ մասնակցելու սեպտեմբերի 5-11-ը Հայաստանում կայանալիք *«STARMUS FESTIVAL VI»* միջազգային փառատոնին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ հայ-սիրիական միջկառավարական համատեղ հանձնաժողովի հերթական նիստին առնչվող հարցեր:

Հիշեցնենք, որ ավելի վաղ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանն ընդունել էր Սիրիայի Արաբական Հանրապետության ժողովրդական ժողովի Սիրիա-Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Լյուսի Իսկանյանի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում կարեւորվել է հայ-սիրիական բարեկամական հարաբերությունների զարգացումը:

Պաշտոնական

# Բուհերի վարկանիշավորման նոր ցանկ

Գործադիրի վերջին նիստում փոփոխություն է կատարվել *«Գիտության եւ կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը եւ պայմանները սահմանելու մասին»* ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշման մեջ:

ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է եղել գիտության եւ կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու հետ կապված գործընթացների կատարելագործման, դրանց արդյունավետության բարձրացման եւ պարզեցման հետ:

## Ընթացիկ իրավիճակը

ՀՀ կառավարության՝ 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշմամբ սահմանված է՝ նշանակալի նվաճում է համարվում քաղաքացու՝ աշխարհի լավագույն բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական վարկանիշավորման http://www.shanghairanking.com/# կայքի աշխարհի համալսարանների ակադեմիական ընդհանուր (Academic Ranking of World Universities) եւ ըստ ոլորտների (Global Ranking of Academic Subjects) տվյալ տարվա ցանկերի առաջին հինգ տասնյակում ընդգրկված հաստատություններում սովորելու կամ դիմորդ հանդիսանալու հանգամանքը:

2018 թվականից գործածվող նման կարգավորումը վերանայման անհրաժեշտություն ունի, քանի որ որեւէ կերպ հիմնավորված չէ բուհերի նման լայն շրջանակ սահմանելը: Շատ հաճախ նշված բուհեր ընդունվելը պայմանավորված է լեզուների իմացությամբ եւ քաղաքացիների վճարունակ լինելով:

## Առաջարկվող լուծում

Գործընթացի ամբողջական կարգավորման համատեքստում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը տարկետման նոր համակարգ ներդնելու օրենսդրական փոփոխության նախաձեռնությամբ արդեն իսկ հանդես է եկել: Մասնավորապես՝ Կառավարությունը կարող է սահմանել այն բուհերի եւ մասնագիտությունների ցանկը, որոնցում սովորելու համար քաղաքացիներին կտրամադրվի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում: Նշված կարգավորումը ավելի նպատակային եւ պետության կարիքներից բխող տարկետման համակարգի ստեղծման հիմք կհանդիսանա:

Կատարված փոփոխությամբ հստակեցվում է բուհերի վարկանիշավորման ցանկը՝ այն նշանակալի նվաճում հասկացությանը համարժեք դարձնելու տեսանկյունից:

Կարգի կիրարկման ընթացքում քաղաքացիների իրավունքների տեսանկյունից խնդրահարույց է նաեւ *«տվյալ տարվա ցանկեր»* արտահայտությունը, քանի որ http://www.shanghairanking.com/ կայքում բուհերի ցանկերի թարմացումը չի համընկնում տարկետման գործընթացի հետ: Նոր կարգավորմամբ սահմանված՝ *«պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու համար դիմելու կամ դրան նախորդող տարվա»* կարգավորման նպատակը կայանում է նրանում, որ քաղաքացիներն ուսումնական հաստատություն ընտրելու պահին՝ դա կլինի նախորդող, թե դիմելու տարվա ընթացքում, արդեն իսկ վստահ կլինեն, որ տարկետման գործընթացում կդիտարկվի իրենց ընտրության պահին գործող բուհերի վարկանիշավորման ցանկը, եւ հետագա փոփոխություններն իր վրա չեն տարածվի: Նմանատիպ դեպքերում ե՛ւ քաղաքացիների, ե՛ւ վարչական մարմնի գործողությունների, ե՛ւ նշանակալի նվաճման համապատասխանության որոշման հարցերում գործընթացը լինի կանխատեսելի եւ հստակ:

Որոշումն ուժի մեջ կմտնի 2023 թվականի մարտի 1-ից, հետեւաբար՝ 2023 թվականի ապրիլի 1-ից դիմող քաղաքացիների համար պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման համար որպես նվաճում կհամարվի աշխարհի լավագույն բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական վարկանիշավորման http://www.shanghairanking.com/# կայքի աշխարհի համալսարանների ակադեմիական ընդհանուր (Academic Ranking of World Universities) ցանկերի առաջին հինգ տասնյակում ընդգրկված հաստատություններում սովորելու հանգամանքը:

***ՀԵՂԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

Փոփոխություն

# Օրենքի նոր կարգավորում

ՀՀ բարձրլեռնային եւ սահմանամերձ բնակավայրերում, ինչպես նաեւ քաղաքային համայնքների որոշ դպրոցներում առկա են ուսուցիչների թափուր հաստիքներ, եւ առարկաների դասավանդման անհնարինության արդյունքում խախտվում է երեխաների կրթության իրավունքը: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ *«Հանրակրթության մասին»* օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորմամբ մանկավարժի որակավորում չունեցող բարձրագույն կրթություն ստացած մասնագետները, որոնք ձեռք են բերել 30 կրեդիտ, հնարավորություն կստանան դասավանդել դպրոցներում:

Համաձայն օրենքի վերոնշյալ դրույթի՝ եթե առնվազն երկու անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը մնա չլրացված, ապա տվյալ թափուր տեղի համար կարող է դիմել նաեւ տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն եւ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված կազմակերպության (կազմակերպությունների), այդ թվում՝ բարձրագույն ուսումնական հաստատության առաջարկած համապատասխան կրթական ծրագրի միջոցով մանկավարժության առնվազն 30 կրեդիտ ունեցող անձը:

ԿԳՄՍ նախարարի հրամաններով՝ մանկավարժի որակավորում չունեցող անձանց առնվազն 30 կրեդիտ տրամադրելու նպատակով երաշխավորվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մշակած ծրագրերը եւ *«Դասավանդի՛ր, Հայաստան»* հիմնադրամը՝ իբրեւ վերապատրաստող կազմակերպություն:

*«Հանրակրթության մասին»* օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի կիրարկումն ապահովող ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թվականի հուլիսի 29-ի *«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան»* հիմնադրամի կողմից ներկայացված մանկավարժահոգեբանական եւ ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման կրթական ծրագիրը եւ դրա ուսումնաթեմատիկ պլանը երաշխավորելու մասին՝ թիվ 1387-Ա/2 եւ 2022 թվականի մայիսի 31-ի *«Դասավանդի՛ր, Հայաստան»* կրթական հիմնադրամը որպես մանկավարժահոգեբանական եւ ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 30 կրեդիտ տրամադրող կրթական ծրագրով դասընթաց իրականացնող կազմակերպություն երաշխավորելու մասին թիվ 1039-Ա/2 հրամանները հասանելի են՝ հետեւյալ հղմամբ. https://escs.am/am/news/13398:

***Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

Խանասորի արշավանք - 125

# Հայոց վրիժառության արդարահատույց ռազմագործողությունը

***«Հայե՛ր, յիշէք նուիրական այդ օրը, Յուլիս ամսու քսանըհինգին կատարեցէ՛ք մեր տօնը… »***

Խանասորի արդարահատույց ռազմագործողության գաղափարը հղացել է անվեհեր ազատամարտիկ Նիկոլ Դումանը, որն Ատրպատականից հասել է Թիֆլիս՝ ՀՅԴ բյուրոյի առաջ հիմնավորելու արշավանքի անհրաժեշտությունը: Խանասորի արշավանքի նպատակը Վանի 1896 թ. ինքնապաշտպանության մասնակից եւ Վանից նահանջող հայերի վրա Գարահիսար լեռան լանջին ուխտադրժորեն հարձակված եւ Աղբակի հայերին կոտորած քրդական մազրիկ ցեղին պատժելն էր:

Աբդուլհամիդյան զանգվածային կոտորածների տարիներին սուլթանական բռնապետական վարչակարգի ու դրա տեղական ներկայացուցիչների վարած հակահայ քաղաքականության դեմ ծառացավ նաեւ հերոսական Վասպուրականի հայությունը: Վասպուրականի ոստան Վանի 1896 թ. ինքնապաշտպանությունը կազմակերպել եւ ղեկավարում էին ազգային կուսակցությունների տեղական ղեկավարներ Մկրտիչ Ավետիսյանը (Թերլեմեզյան, Արմենական կուսակցություն), Մարտիկը (Մարտիրոս Սարուխանյան, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն) եւ Պետոն (Ալեքսանդր Պետրոսյան, Հայ հեղափոխական դաշնակցություն):

Մարտերը հիմնականում մղվել են Վանի Այգեստան թաղամասում, որը բաժանվել է 4 պաշտպանական շրջանների՝ 30-ից ավելի դիրքերով: Ինքնապաշտպանական խմբերում ընդգրկվել է շուրջ 700–900 երիտասարդ: Ինքնապաշտպանական ուժերն ունեցել են ընդամենը 518 հրացան: Վանեցիներին օգնության են շտապել Վազգենի եւ Ներսեսի հայդուկային խմբերը: Հակառակորդը կենտրոնացրել է մոտ 10 հազար զինվոր՝ զինված արդիական զենքով եւ հրետանիով: Ինքնապաշտպանական մարտերն սկսվել են հունիսի 3-ին: Հույսը դնելով լավ սպառազինության ու թվական գերակշռության վրա՝ թշնամին փորձել է շեշտակի գրոհով ճեղքել վանեցիների պաշտպանությունը: Սակայն հանդիպելով հայերի հուժկու հակահարվածին՝ զգալի կորուստներով նահանջել է: Հաջողությամբ հետ մղելով թուրքերի հարձակումները՝ քաղաքի պաշտպանները դիմել են հանդուգն հակագրոհների. նման մի գործողության ժամանակ գրավել են հակառակորդի 2 թնդանոթ:

Զենքի եւ զինամթերքի խիստ պակասը ինքնապաշտպանության ղեկավարներին հարկադրել է համաձայնել Վանում անգլիական հյուպատոսի եւ թեմական առաջնորդ Սահակ վարդապետ Բագրեւանդցու առաջարկությանը՝ դադարեցնել դիմադրությունը: Իշխանությունները խոստացել են հնարավորություն տալ ինքնապաշտպանության կազմակերպիչներին, մասնակիցներին եւ նրանց միանալ ցանկացողներին անարգել հեռանալ դեպի Պարսկաստան: Մոտ 1500 մարդ հունիսի 8-ին Վանից հեռացել է Վարագա լեռ: Մկրտիչ Ավետիսյանի ղեկավարությամբ անզեն բնակչության մի մասը եւ մարտիկները (շուրջ 1000 հոգի) որոշել են անցնել Պարսկաստան, սակայն շրջապատվել են Աղբակի Ս. Բարդուղիմեոս վանքի մոտ, որտեղ էլ նրանց մեծ մասը զոհվել է անհավասար մարտում: Զոհվում է նաեւ Վանի ինքնապաշտպանության փոխղեկավար Մ. Ավետիսյանը:Համառ մարտերից հետո միայն 20-30 հոգու է հաջողվել հասնել Սալմաստ:

Նույն ճակատագրին է արժանանում նաեւ Պետոյի եւ Մարտիկի 83-հոգանոց ջոկատը: Պետոյի եւ Մարտիկի շուրջը համախմբված խումբը արմենականների հեռանալուց հետո եւս մի քանի օր մնում է Վարագա լեռներում: Խմբի ղեկավարներին հաջողվում է համոզելով, երբեմն էլ՝ բռնությամբ, իրենց՝ շուրջ 500-600 անզեն հետեւորդներին փոքր խմբերով վերադարձնել Այգեստան: Զինյալ խմբով Վան է վերադառնում նաեւ Վազգենը: Մնացածները՝ շուրջ 80 զինյալներ, Պետոյի եւ Մարտիկի գլխավորությամբ Աբաղայի գծով շարժվում են դեպի Պարսկաստան: Բայց ուխտադրուժ թշնամին ակնդետ հետեւում էր նաեւ այս խմբի քայլերին: Գարահիսար լեռան լանջին խումբն ընկնում է քրդական մազրիկ ցեղի զինված ելուզակների շրջապատման մեջ ու անհավասար եւ կատաղի կռվում գլխովին ոչնչանում:

Վան քաղաքից ազատամարտիկների հեռանալուց հետո թուրք զինվորներն ու համիդեականներն անարգել ներխուժում են հայկական թաղամասեր եւ կոտորում անզեն խաղաղ բնակչությանը: Մեկ շաբաթ տեւած կռիվների ընթացքում զոհվում է շուրջ 500 հայ, սատակվում 300 թուրք ջարդարար: Առավել ծանր կորուստներ են ունենում Վասպուրականի անպաշտպան գյուղերը: Ջարդարարները կոտորում են շուրջ 20 հազար հայի:

Վան քաղաքի տարեգրության մեջ 1896 թ. հունիսյան դեպքերը ստացել են *«Վանի մեծ դեպք»* անվանումը:

Փաստորեն, 1896 թ. հունիսին, քուրդ Մազրիկ ցեղախումբը, սուլթան Աբդուլ Համիդի (*«Արյունոտ սուլթան»*) հրամանով, Վանի հայոց ինքնապաշտպանությունից հետո հարձակվել էր դեպի Պարսկաստան նահանջող անզեն մարտիկների վրա եւ կոտորել գրեթե բոլորին: Ուստի, առաջարկվեց վրիժառություն իրականացել, կազմակերպել արշավանք դեպի Խանասոր, որտեղ վրաններում ապրում էր քրդական Մազրիկ ցեղը ու պատժել սուլթանի կամակատար ոճրագործներին:

Վանի հերոսական ինքնապաշտպանությունը ձախողեց Վասպուրականի հայության նկատմամբ զանգվածային ջարդ կազմակերպելու համիդյան իշխանությունների ծրագիրը: Այդ ցեղասպանական նկրտումները կանխվեցին քաղաքական երեք կուսակցությունների դրսեւորած աննախադեպ միասնականության ու արդյունավետ համագործակցության շնորհիվ եւ մեծ զոհողությունների ու սխրանքների գնով: Ամենածանր ու անամոք կորուստն ունեցավ Արմենական կուսակցությունը, որի հետեւանքով նա խիստ թուլացավ եւ, այլեւս չկարողանալով վերագտնել իրեն ու վերականգնվել, հայոց ազատամարտում մղվեց երկրորդական դիրքեր:

Նկատենք, որ 1880–1890-ական թվականներին կովկասաբնակ եւ ռուսաստանաբնակ հայերի շրջանում մեծացել էր հետաքրքրությունն արեւմտահայերի ազատագրական պայքարի նկատմամբ, ուստի ծավալվում է արեւմտահայերին սատարելու, օգնության հասնելու շարժում: Հայրենիքի ճակատագրով մտահոգ եւ ազգակիցներին օգնելու պատրաստ հայ երիտասարդները մի շարք քաղաքներում (Ալեքսանդրապոլ, Շուշի, Կարս, Երեւան, Իգդիր, Ախալցխա եւ այլն) կազմել են հայդուկային ու զինատար խմբեր եւ, զենք ու զինամթերքով զինված, փորձել են անցնել Արեւմտյան Հայաստան. հատկապես հայտնի են Վարդան Գոլոշյանի, Սարգիս Կուկունյանի նախաձեռնությունները: Կազմակերպվել են նաեւ մարտական ու զինատար խմբեր, որոնք զենք են փոխադրել Ռուսաստանից, Այսրկովկասից, Իրանից:

Մարտական խմբերի առաքելությունն անարգ թշնամու դեմ հաջող ռազմական գործողություններ իրականացնելն էր, լրտեսներին ու մատնիչներին պատժելը, քրդերին սաստելն ու զսպելը: Զինատար խմբերը տարբեր ճանապարհներով զենք ու զինամթերք էին տեղափոխում Երկիր: Զինատար ֆիդայիներ են եղել Նիկոլ Դումանը, Խանասորի Վարդանը, Արմենակ Եկարյանը, Սեւքարեցի Սաքոն, Վազգենը, Խանը, Կայծակ Վաղարշակը, Աշոտ Երկաթը, Տուրբախը, Սեբաստացի Մուրադը, Սեպուհը, Թորգոմը, Ճարտարը, Գուրգենը, Նեւրուզ Օնիկը, Փոխիկը եւ ուրիշներ: Հետագայում տարբեր վայրերում այդ գործին լծվել էին նաեւ Կորտկանցի Կյուրոն, Հովոն, Սիոն, ռես Սախոն, Սերոբը, Խաչան գյուղից Բրախոլամը՝ իր երկու որդիների՝ Կնյազի ու Մանուկի հետ (Բրախոլամը նրա կեղծանունն էր, իսկական անունը հայտնի չէ: Բրախոլամ քրդերեն նշանակում է *«Եղբորս ծառան»:* Ըստ Արամ Մանուկյանի՝ *«Այս ընտանիքը մեծ ծառայութիւն է արել յեղափոխական գործին»*), Պզտիկ գյուղից Ղուկասը, ջրաղացպան Գեւորգը, Հարությունը, Անձավ



**Խանասորի արշավանքի մասնակից Նիկոլ Դումանի խումբը**

գյուղից Պարապը, հաճի Կարապետը, մշեցի Հարությունը, Շիրինը, Սիրունը, շամիրամցի Սողոն, Եփրեմը, Պողոս եւ Պետրոս եղբայրները, էրզրումցի Գեղամը, Դրոն, որ տարբեր տեսակի բեռների միջոցով զենք ու զինամթերք էր առաքում Հին Բայազետից Իգդիր, ապա Վան ու Շատախ: Զինատար խմբերից առավել հայտնի էին *«Մրրիկը», «Կայծակը», «Մասիսը», «Դժոխքը» «Որսկանը», «Ճապոնը», «Շանթը», «Արտավազդը», «Արծիվը»*, որոնք մեծ դժվարությամբ Երկիր էին հասցնում անհրաժեշտ զենքն ու զինամթերքը: Զենքը մի վայրից մյուսը, բազմաթիվ հանգրվաններով հասցվում էր գաղտնի եւ այդպես մինչեւ Երկրի խորքերը: Այսպիսի եղանակով զենքի տեղափոխումը Երկիր, Արամ Մանուկյանի վկայությամբ, Կոմսը (Վահան Փափազյան, 1876 թ., Թավրիզ – 1973 թ., Բեյրութ, հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ կուսակցության անդամ: 1906–1907 թթ. Ղեկավարել է Կովկասից Վան ռազմամթերք փոխադրելու գործը) անվանել է *«ծծման եղանակ»:* Ռազմամթերքը կամաց-կամաց *«ծծվում»* էր դեպի Երկրի խորքերը՝ Վան, Մուշ: Աբաղայի հայերը զենք-զինամթերքը փոխադրում էին մինչեւ Բերկրիի փոսը, Պզտիկ գյուղ, Անձավ եւ Գործոթ: Այնտեղից էլ՝ գյուղից գյուղ՝ Թիմարով կամ Արճակով դեպի Վան: Գործում էին ռազմամթերքի փոխադրության հետեւյալ հայտնի երթուղիները.

1. Երեւան-Կարս-Բասեն-Խնուս-Վարդո-Սասուն,
2. Երեւան-Միրզաջան-Արճեշ-Տարոն եւ Վասպուրական,
3. Երեւան-Խոյ-Թադեոս Առաքյալի վանք-Աբաղայի դաշտ-Վան,
4. Երեւան-Սալմաստ-Բաշկալե-Հայոց Ձոր-Վան,
5. Երեւան-Դավալու-Մակու-Ս. Ստեփանոս Նախավկայի վանք-Խոյ եւ այլն:

Եթե արդյունավետության տեսակետից դիտարկենք զինատար խմբերի կողմից 1890–1905 թթ. զենքի փոխադրության արդյունքները, ապա կտեսնենք, որ դրանք այնքան էլ գոհացուցիչ չէին: Սակայն ստեղծված պայմաններում զենք հայթայթելու, սեփական պատիվն ու կյանքը պաշտպանելու այլ ելք ու միջոց իսկապես չկար:

Ինչպես վերը նշեցինք, Խանասորի արշավանքի գաղափարը, որն արժանանում է Քրիստափոր Միքայելյանի հավանությանը, հղացել էր հայ ազատագրական պայքարի նվիրյալ Նիկոլ Դումանը: Դաշնակցության Կովկասյան շրջանային ժողովը հաստատել է ծրագիրը, որն իրականացրել է ՀՅԴ արեւելյան բյուրոն: Կազմվել է զինված արշավախումբ, որը բաժանվել է հարյուրյակների, հիսնյակների եւ տասնյակների: Ընդհանուր հրամանատար է նշանակվել Նիկոլ Դումանի համագյուղացի Վարդանը (Սարգիս Մեհրաբյան, Խանասորի Վարդան), օգնական՝ Հ. Արղությանը (Իշխան), հարյուրապետներ՝ Մոկացի Մանուկը եւ Էրզրումցի Արամայիսը, հիսնապետ՝ Նիկոլ Դումանը, հեծելախմբի հրամանատար՝ Սեւքարեցի Սաքոն: Հայ մարտիկների հետ միասին Խանասորի արշավանքին մասնակցել են նաեւ հետագայում Հայոց եկեղեցու նվիրյալ հոգեւորականներ դարձած Գրիգոր քահանա Ավագյանը, Հակոբ քահանա Սառիկյանը, Վարդան քահանա Նալբանդյանը եւ ուրիշներ: Արցախի հայուհիներն էլ, անմասն չմնալով արդարահատույց արշավանքին մասնակցելու գործին, իրենց ձեռքով գործել ու արշավանքի կազմակերպիչներին էին նվիրել մարտական դրոշ, որի վրա ասեղնագործել էին *«ՎՐԷ՛Ժ, ՎՐԷ՛Ժ»* մակագրությունը:

Պատմագիտական գրականության մեջ Խանասորի արշավանքը գրեթե միշտ ներկայացվել է որպես կազմակերպական առումով ինքնուրույն եւ մեկուսի ռազմական գործողություն եւ գլխավորապես շեշտվել է նրա վրեժխնդրական ու պատժիչ կողմը: Ըստ արշավանքի կազմակերպիչ Նիկոլ Դումանի՝ այն պետք է լուծեր ո՛չ միայն եւ ո՛չ այնքան վրիժառուական ու պատժիչ խնդիրներ, որքան՝ փորձեր իր նպաստը բերել Հայկական հարցի դրական լուծմանը:

Նախատեսվող արշավանքն, ըստ էության, նախորդ տարվա համար ծրագրված վրեժխնդրական գործողությունը տրամաբանական ավարտին հասցնելու նպատակը պետք է հետապնդեր: Վանի 1896 թ. ինքնապաշտպանության ձախողումից եւ Հրայրի ու Արամ Արամյանի ձերբակալությունից հետո այդ ձեռնարկը մնացել էր չիրականացված, իսկ այդ նպատակով հատկապես Պարսկաստանում կուտակված միջոցները (զենք, զինամթերք, կռվող ուժեր) հիմնականում պահպանվել էին: Ըստ որում, եթե 1896 թ. զորախմբերի առջեւ դրվում էին մահմեդական ելուզակ ու թալանչի զանգվածը զսպելու եւ *«դաստիարակչական»* խնդիրներ, ապա Վանի իրադարձություններից հետո Պարսկաստանից կատարվելիք արշավանքը ստանում էր ավելի որոշակի եւ նպատակային ուղղվածություն:

Այսպիսով՝ արշավանքի հիմնական թիրախ պետք է դառնային Պարսկաստանի հետ սահմանամերձ շրջանների քրդական ցեղերը, մասնավորապես Շարաֆ բեկի գլխավորած մազրիկ ցեղը, որն իր վճռական տխրահռչակ դերակատարությունն էր ունեցել Վանի 1896 թ. ինքնապաշտպանության ձախողումից հետո այնտեղից Պարսկաստան նահանջող հայկական ուժերը ոչնչացնելու գործում եւ, բացի այդ, Աղբակի հայության ջարդերի իրականացնողն էր:

*շարունակությունը՝ էջ 9*

# Հայոց վրիժառության արդարահատույց ռազմագործողությունը

*սկիզբը՝ էջ 8*

1897 թ. համար նախատեսված մարտավարության խնդրում կային էական տարաձայնություններ ՀՅԴ բյուրոյի եւ Ատրպատականի ու Վասպուրականի կենտրոնական կոմիտեների միջեւ: Վերջիններս դեմ էին այդ տարվա մարտավարության առանցքային գաղափարներից մեկին՝ արշավանքի իրականացմանը: Նրանք ուժերը եւրկրում՝ տվյալ պարագայում՝ Վասպուրականում, կենտրոնացնելու կողմնակիցներ էին: Նման պայմաններում Նիկոլ Դումանին ու իր գաղափարակիցներին վիճակված էր հաղթահարել լուրջ խոչընդոտներ արշավանքի նախապատրաստման եւ իրականացման ճանապարհին:

Արշավանքի իրագործման ժամկետի հարցում Քրիստափոր Միքայելյանի լավատեսությունը, սակայն, չի արդարանում: Դա բացատրվում է երկու հանգամանքներով: Նախ՝ ՀՅԴ Ատրպատականի մարմինները որոշակիորեն ձգձգում են դրա իրականացումը՝ հույս ունենալով արշավանքը զուգակցել Կ.Պոլսում նախատեսված ձեռնարկների հետ: Մյուս կողմից՝ չնայած Ատրպատականում նախապատրաստական աշխատանքների ավարտին՝ արշավանքի նպատակահարմարության հարցում շարունակում էին պահպանվել էական տա-րաձայնություններ Ատրպատականի եւ Վասպուրականի ղեկավար գործիչների շրջանում: Նրանցից ոմանք (Վագգեն, Վարդան (Ս. Մեհրաբյան), Պետրոս Սերեմճյան (Բուլղարացի Պետո), Գուրգեն (Բ. Մալյան) եւ ուրիշներ) դեմ էին արշավանքին եւ առաջարկում էին եղած ուժերը խումբ-խումբ փոխադրել Վասպուրական, ամրանալ որեւէ վայրում, օրինակ, Շատախում եւ պայքար ծավալել թշնամու դեմ. մինչդեռ մյուսները (Նիկոլ Դուման, Քրիստափոր Օհանյան, Գալուստ Ալոյան, Սարգիս Օհանջանյան (Ֆարհատ) եւ ուրիշներ), ընդհակառակը, արշավանքն իրականացնելու կողմնակիցներ էին: Նրանց միջեւ առաջացած առճակատումը վերացնելու եւ արշավանքին ընթացք տալու նպատակով 1897 թ. հուլիսին, որպես ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ, Սալմաստ է ժամանում Հարություն Շահրիկյանը: Նրա ջանքերով տարակարծությունները վերանում, իսկ վեճերը հարթվում են, եւ վերջնական վճիռ է կայացվում արշավանքի օգտին: Դրանով հանդերձ՝ մասամբ բավարարվում է նաեւ Վասպուրականի գործիչների պահանջը, եւ նախքան արշավանքը 25 (այլ տարբերակով՝ 35) հոգանոց զինված խմբով Վան են վերադառնում Վազգենը եւ Գուրգենը: Վերջինս ՀՅԴ լիազոր ներկայացուցչի իրավասություններով շուտով անցնում է Խլաթ, ապա Տարոն-Սասունի շրջան:

Դաշնակցական 253 մարտիկներից (այլ տվյալներով՝ 275 անձից բաղկացած հարվածային ջոկատ, որից 40 հոգին՝ հեծյալ) բաղկացած զորախումբը 1897 թ. հուլիսի 24-ի լույս 25-ի գիշերը Վարդանի (զորախմբի հրամանատար), Իշխանի (փոխհրամանատար), Նիկոլ Դումանի (արշավանքի կազմակերպիչ) ու այլոց հրամանատարությամբ Ատրպատականի տարածքից անցնում է պարսկա-թուրքական սահմանը եւ շրջապատում Արաուլ լեռան փեշերին՝ Խանասորի դաշտում, տեղակայված քրդական մազրիկ ցեղախմբին: Աղեղնաձեւ շրջապատելով մազրիկցիների 250 վրանները, որոնց կենտրոնում գտնվում էին Շարաֆ բեկի երեք սպիտակ վրանները, հայ մարտիկները 1897 թ. հուլիսի 25-ի վաղ առավոտյան, երգելով Միհրդատ Եսայանի *«Կռվեցե՛ք, տղերք»* երգը, որ նվիրված էր Նիկոլ Դումանի՝ Բողազ Քյասանի կռվին, անակնկալ հարձակվում են մազրիկ ցեղախմբի վրա, գնդակոծում են հակառակորդին՝ նրան պատճառելով մեծ կորուստներ: Կոտորվեց մազրիկ ցեղի տղամարդկանց մեծամասնությունը: Շատ քչերին հաջողվեց ազատվել ֆիդայու վրեժխնդիր գնդակից: Հավատարիմ հայի եւ ֆիդայու պատվին ու արժանապատվությանը՝ հայ ֆիդայիները խնայեցին քրդերի կանանց եւ երեխաներին: Ֆիդայիների ցասումից խույս տվեց նաեւ մազրիկների ցեղապետը՝ Շարաֆ բեյը, որը կանացի հագուստով ծպտյալ դուրս եկավ հայերի շրջափակումից: Գրավելով հարմար դիրքեր՝ հայ վրիժառուները հուլիսի 25-ին հետ են մղում մազրիկցիներին օգնության եկած հարեւան քրդական ցեղերի, ինչպես նաեւ կառավարական բազմահազար ուժերի գրոհները՝ կռիվների ընթացքում տալով 19 զոհ: Խուսափելով մազրիկ ցեղին օգնության հասած մեծաթիվ քրդական այլ ցեղերի հետ հետագա ավելի լայնածավալ բախումներից՝ ՀՅԴ արշավախումբը նահանջում է դեպի Պարսկաստան: Խանասորի արդարահատույց արշավանքն ավարտվեց 1897 թ. հուլիսի 27-ին: Պարսկաստան նահանջած զորախումբը պահպանեց իր հիմնական մարտական ուժը, զենքն ու հանդերձանքը: Արշավանքից հետո քրդերն սկսեցին զգուշանալ հայ ֆիդայիների հետ բախումներից, նույնիսկ եղան նաեւ համագործակցության դեպքեր: Արշավանքի ամբողջ ընթացքում զոհվել են 25 հայեր, որոնց թվում էր նաեւ ՀՅԴ հիմնադիր Ռոստոմի (Ստեփան Զորյան) եղբայրը՝ Կարոն (Արիստակես Զորյան): Նրա անմար հիշատակին է ձոնվել *«Ագուլիսցի քաջ պատանի»* երգը (*«…Քեզպեսներին բյուր երանի, Դուք եք հույսը Հայաստանի: Խունկ ու մոմով գամ Խանասոր,*

*Արցունք թափեմ ես ամեն օր…»*):

Խանասորի արշավանքն աննախադեպ երեւույթ էր հայոց ազատամարտի պատմության մեջ: Այն ցուցադրեց հայ հայդուկի հոգու վեհությունը, նրան բնորոշ մարդասիրությունը եւ, ընդհանրապես, հայ ազատագրական շարժման բարոյական բարձր նկարագիրը: Այդ տարիներին ժողովրդի միջավայրում ստեղծված եւ Խանասորի վրիժառու հայ հայդուկին նվիրված երգի՝ *«Կնոջն երբեք ձեռք տալու չէ վրեժխնդիր քաջ ֆիդան»*՝ պատվիրանի իմաստ ունեցող տողը հայ ազատագրական շարժման անխախտելի կանոններից մեկը դարձավ:

Լինելով մեծամասշտաբ արշավանքներից առաջինը եւ նաեւ հետագա տարիներին կազմակերպվածներից ամենաբազմամարդը՝ Խանասորի արշավանքը շահեկանորեն տարբերվում է մյուս բոլոր արշավանքներից, որոնք, որպես կանոն, ավարտվում էին մարդկային ու ռազմական ռեսուրսների մեծ կորուստներով: Իր բովանդակությամբ եւ նախնական ծրագրմամբ՝ Խանասորի արշավանքը պատժիչ-վրեժխնդրական ձեռնարկ էր եւ հարձակողական մարտավարության դրսեւորում: Արշավանքը նոր ու գնահատելի լիցք է հաղորդում հայ ազատագրական շարժմանը՝ կրկին ցուցադրելով պայքարը շարունակելու վճռականությունը: Մյուս կողմից՝ այն, անկասկած, որոշակի զսպող ազդեցություն է ունենում նաեւ թուրք-պարսկական սահմանի շրջակայքում բնակվող քրդական այլ ցեղերի համար: Նրանք համոզվել էին, որ հարկ եղած դեպքում հայն էլ կարող է իրենից մարտական ուժ ներկայացնել եւ վրեժխնդիր լինել իրեն կոտորողներից: Հիշյալ հանգամանքը սահմանամերձ շրջանների քրդերի մի մասին դրդում է կամ բարեկամանալ հայերի հետ, կամ զգուշանալ, կամ էլ չեզոք դիրք գրավել նրանց նկատմամբ: Դա կարեւոր հանգամանք էր, եւ հետագա տարիներին իր որոշակի նպաստն է բերում Պարսկաստանից Վասպուրական զենքի փոխադրման գործի նոր ձեւով կազմակերպմանը:

Պատժիչ-վրեժխնդրական հարցեր լուծելով հանդերձ՝ Խանասորի արշավանքը հայոց զինյալ ազատամարտի՝ 1897 թ. համար նախանշված մարտավարության մաս էր կազմում եւ ուներ նաեւ Հայկական հարցի վրա դիվանագիտության ուշադրությունը հրավիրելու խնդիր: Ճիշտ է, այդ բնագավառում նրա արդյունքները շոշափելի չէին եւ միջազգային արձագանքներն էլ սպասվածից փոքր, բայց դրանք ավելի շատ պայմանավորված էին ոչ թե արշավանքի անարդյունավետությամբ, այլ այդ ամիսներին ստեղծված միջազգային որոշակի իրավիճակով, մասամբ նաեւ Կ.Պոլսում Խանասորի արշավանքին զուգահեռ իրականացվելիք ձեռնարկների գրեթե լիակատար ձախողմամբ:

1897 թ. հուլիսի 25-ի Խանասորի արշավանքը հայոց պատմության մեջ մնաց՝ որպես անօրինակ խիզախումի կարեւոր ու լավագույն պատմական դրվագ: Իրականացավ արշավանքի հրամանատարի՝ Խանասորի Վարդանի նվիրական երազանքը. *«Ցույց տանք մեր հասարակության թերահավատ մասին, որ ընդունակ ենք հեղափոխական, թեեւ՝ անհավասար, կռիվը հաջողությամբ առաջ տանելու. ցո՜ւյց տանք ամբողջ աշխարհին, որ հայն էլ գիտե կռվել ազատության համար…»:*

Խանասորի արշավանքի հաջող ավարտը մեծ ոգեւորություն առաջացրեց հայության շրջանում, սրտապնդեց ու երկար ժամանակ հայերի համար պայքարի, արդար վրեժի ու հաղթանակի խորհրդանիշ դարձավ հենց Խանասորը:

Հետագայում Խանասորի արշավանքի մասնակից, ֆիդայի Գալուստ Ալոյանը (Դերվիշ Թորոս) հավերժացրեց Խանասորի հիշատակը՝ արշավանքի մասին ստեղծելով *«Խանասորի արշավանքը»* երգը:

**Խանասորի արշաւանքը**
խոսք՝ Թորոսի
երաժշտություն՝ Գեւորգ Կառվարենցի

*Կարկուտ տեղաց Խանասորայ*
*դաշտումը,*
*Ֆետայիներ՝ դաշնակցական,*
*վրիժառու, գոռում են:*

*Սոսկաց քիւրտը՝*
*լեղապատառ մազրիկցին,*
*Չէր երազում ջնջուել ի սպառ*
*քաջ ֆետայու գնդակից:*

*- Եամա՛ն, Աստուած, ֆետան եկաւ,*
*ո՞ւր փախչինք,-*
*Ասաց որդուն կրծքին սեղմած*
*լեղապատառ քրտուհին:*

*- Մի՛ վախենար, հանգիստ կեցիր,*
*բաջի ջան,*
*Կանանց երբեք ձեռք տալու չէ*
*վրէժխնդիր քաջ ֆետան:*

*Մի ժամուան մէջ*
*Մազրիկ ցեղը ջնջուեցաւ,*
*Խանասորայ կանաչ դաշտը*
*կարմիր գոյնով ներկուեցաւ:*

*Փչի՛ր, շեփոր, դէպ Արաուլ մենք թռչենք,*
*Դիրքեր բռնենք, գաթայ,*
*հալուայ ձիւնի ջրով ճաշակենք:*

*Մերթ կռւում է, մերթ բարձրանում*
*քաջ ֆետան,*
*Եզակի է պատմութեան մէջ*
*արշաւանքի տեսարան:*

*Չկար Կարոն, տխուր պատեց ամէնքին,*
*Երանի՜ է նրա հոգուն,*
*որ զոհ դարձաւ այդ կռուին:*

*Քեզ ենք յանձնում մեր քաջերը,*
*ո՛վ պաշտելի Արաուլ,*
*Կրծքիդ մէջը ամուր պահիր*
*անմահ զոհերն հայերուն:*

*Կը գայ շուտով շղթան կտրած հայ մարդը,*
*Մեր զոհերը ամուր պահիր*
*գրկիդ մէջը խնկելի:*

*Հայե՛ր, յիշէք նուիրական այդ օրը,*
*Յուլիս ամսու քսանըհինգին*
*կատարեցէ՛ք մեր տօնը:*

***Արման ՄԱԼՈՅԱՆ***
***Պատմական գիտությունների թեկնածու***



**Խանասորի անմահ նահատակ Կարո (Արիստակես Զորյան, 1871–1897 թթ.)**



**Վարդան (Սարգիս Մեհրաբյան, Խանասորի Վարդան, 1867–1943 թթ.)**



**Հովսեփ Արղության (Իշխան, Խանասորի Իշխան, 1863–1925 թթ.)**



**Նիկոլ Դուման (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան, 1867–1914 թթ.)**

# Կրթության բարեփոխումների անհրաժեշտությունը. Հանրակրթության պետական նոր չափորոշիչ

***«Մենք ապրում ենք պատմական ժամանակահատվածում,որտեղ փոփոխություններն այնքան արագացված են,որ մենք սկսում ենք տեսնել ներկան միայն այն ժամանակ,երբ այն տակավին անհետացել է:»***

**Ռոնալդ Դեյվիդ Լեյնգ**

Փոխվում է ոչ միայն աշխարհը, այլեւ նրա մասին մեր պատկերացումները: Վերջին 20 տարիների ընթացքում լուրջ փոփոխություններ են կատարվել աշխարհաքաղաքականության, աշխարհատնտեսության եւ աշխարհամշակութային տարածություններում:

20-րդ դարի վերջին տասնամյակներում աշխարհում սկիզբ առած հասարակական եւ տնտեսական վերափոխումները արմատապես փոխեցին նաեւ պահանջները կրթական ծառայությունների ձեւավորման եւ մատուցման նկատմամբ: Պահանջները վերաբերում են ինչպես կրթության նպատակներին եւ բովանդակությանը, կրթական տեխնոլոգիաներին, այնպես էլ ոլորտում եւ կրթական հաստատություններում կառավարման ձեւերին եւ մեթոդներին, ռեսուրսների տեղաբաշխմանն ու ռացիոնալ օգտագործմանը, պետության դերին եւ առհասարակ կրթության փիլիսոփայությանը:

Ամբողջ աշխարհում՝ կրթական ոլորտում փոփոխությունները պայմանավորված են կոմպենտենցիաների (կարողունակություն) ձեւավորման եւ զարգացման վրա:

**Իսկ ի՞նչ է կոմպետենցիան:**

Հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ շատ հաճախ մարդու ինտելեկտի բարձր աստիճանը առօրյա արդյունավետ գործունեության համար կամ մասնագիտական գործունեության մեջ արդյունավետ աշխատելու համար բավարար չէ: 21-րդ դարում մարդուն գիտելիքից բացի անհրաժեշտ են կոմպետենցիաներ՝ արդյունավետ աշխատելու, ճիշտ կողմնորոշվելու եւ ըստ իրավիճակի գործելու համար: Կրթական կոմպետենցիաներն անհատի համալիր բնութագրիչներ են՝ գիտելիքների, վերաբերմունքի եւ արժեքների համակարգ, որը թույլ է տալիս հաջողությամբ լուծելու որոշակի խնդիրներ: Բնագիտության եւ մաթեմատիկայի բարձր արդյունքներով, բարձրագույն կրթության դիմորդների բարձր չափանիշներով, միջազգային գնահատման արդյունքներով կրթական բարձր արդյունավետություն ունեցող երկրների կրթական համակարգերի հետազոտությունները ցույց են տվել, որ արդյունավետությունը պայմանավորված է կրթական հենքի վրա սահմանված կոմպետենցիաների շուրջ կրթական գործընթացը կառուցելով: Կրթության մակարդակով առաջատար տարբեր երկրներում կրթական համակարգերի հենքում ընկած կրթական կոմպետենցիաները եւ արդյունավետության գրավական բաղադրիչ մասերը:

Այժմ ներկայացնենք կրթության բնագավառում առաջատար երկրների կրթության բովանդակության հիմքում ընկած կոմպետենցիաները, առանցքային ուղղությունները: Դիտարկենք նաեւ ՀՀ կրթական քաղաքականությունը, քանի որ մեր երկիրը, որդեգրելով առաջատար երկրների լավագույն փորձը, նոր չափորոշչի հիմքում դրել է այդ երկրների հաջողության գրավական տրամաբանությունը եւ կոմպետենցիաները:

## Հայաստան

ՀՀ կրթական բարեփոխումների անհրաժեշտությունը պայմանավորված է հանրակրթության առկա խնդիրներով, որոնք առանց հիմնարար փոփոխությունների լուծվել չեն կարող: 2021թ. փետրվարի 4-ին Կառավարությունը հաստատեց հանրակրթության նոր չափորոշիչը: Հետազոտողները հաշվի են առել կրթության ոլորտում առաջատար երկրների կրթական համակարգի արդյունավետության գրավական կոմպետենցիաները, հենքային բաղադրիչները եւ ներառել են հանրակրթական նոր չափորոշչի հիմքում:

Կրթական կոմպետենցիաներն են.

- *լեզվական գրագիտություն,*
- *սովորել սովորելու,*
- *ինքնաճանաչողական եւ սոցիալական,*
- *ժողովրդավարական եւ քաղաքացիական,*
- *թվային եւ մեդիա,*
- *մշակութային,*
- *մաթեմատիկական եւ գիտատեխնիկական,*
- *տնտեսական կարողունակություն:*

Չափորոշչում սահմանված են սովորողի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները, որոնք նպատակաուղղված են նշված 8 առանցքային կոմպետենցիաների ձեւավորմանը: Վերջնարդյունքները ձեւակերպված են դպրոցի կրթական տարբեր աստիճանների համար:

Վերջնարդյունքները պետք է լինեն՝

- *հստակ ձեւակերպված, միարժեք ընկալվող,*
- *հասանելի,*
- *շարունակական եւ զարգացող,*
- *չափելի:*

## Կանադա

Կանադան համարվում է համաշխարհային առաջատարներից մեկը գրագիտություն զարգացման որակով: Առաջատար է կարդալու եւ մաթեմատիկական գրագիտության, գիտական գրագիտության, ՏՀՏ գրագիտության ոլորտներում եւ ունիվերսալ է կոմպետենցիաներով (քննադատական մտածողություն, ստեղծագործականություն եւ այլն): Ուսումնական ծրագրերը թարմացնելու համար ընտրվել են հիմնական կոմպետենցիաները, որոնք ապահովում են էական ազդեցություն անհատի կրթական հաջողությունների վրա, նրա հարաբերությունները այլ մարդկանց հետ, զբաղվածության հնարավորությունները, առողջությունը եւ ընդհանուր բարեկեցությունը:

Կրթական կոմպետենցիաների բաղադիչներն են.

- *բնավորության կրթություն,*
- *քաղաքացիական կրթություն,*
- *համագործակցություն,*
- *ստեղծագործականություն,*
- *հաղորդակցականություն,*
- *քննադատական մտածողություն եւ խնդիրների լուծում:*

## Ֆինլանդիա

*«Ֆորմալ կրթության»* չափանիշով առաջատար դիրքում է Ֆինլանդիան: Ֆինլանդիայի կրթական համակարգը լավագույններից է աշխարհում՝ տնտեսության կարիքների համար մարդկանց հմտությունները համապատասխանելու ձեւաչափով: Չնայած իր փոքր չափերին՝ Ֆինլանդիայի տնտեսությունը ամենահաջողակներից մեկն է աշխարհում: Ֆինլանդիան ձգտում է, որ կրթական նպատակները բավարարեն տնտեսության կարիքները: Բարեփոխումների ծրագիրը կառուցվել է շուրջ 20 տարի: Բացահայտվել են 7 ընդհանուր /խաչաձեւ կոմպետենցիաներ, որոնք ներառվել են ուսումնական պլանում եւ ձեւավորվում են բոլոր առարկաներից: Ֆինն հետազոտողները հատուկ ուշադրություն են դարձնում *«սովորել սովորելու»* (learning to learn) կոմպետենցիային, այն համարելով հիմնաքար ամբողջ ուսումնական գործընթացի համար: Այս կոմպետենցիան վերաբերում է կրթությանն ամբողջությամբ եւ չի սահմանափակվում որեւէ ուղղությամբ կամ առարկայով: Այն ուղղորդում է կրթական գործընթացը եւ ազդում սովորողների ակադեմիական նվաճումների վրա: «Սովորել սովորելուե կոմպետենցիան գործոն է դառնում ամբողջ կյանքի ընթացքում ուսուցման մեջ՝ որոշելով անհատի ճանաչողական հակումները եւ ինքնազարգացման ցանկությունը: Ֆինն հետազոտողները առանձնացնում են *«սովորել սովորելու»* կոմպետենցիայի հետեւյալ հիմնական բաղադրիչները.

- *մտածողության կարողություններ, խնդիրների լուծման հմտություններ,*
- *վերաբերմունք եւ արժեքներ՝ կապված դպրոցի եւ ուսումնական գործընթացի հետ,*
- *գիտելիք ստանալու ձգտում, որպես հատուկ մտածելակերպ:*

Կոմպետենցիաներից յուրաքանչյուրի համար սահմանված են ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները: Կրթական կոմպետենցիաներն են.

- *սովորել սովորելու,*
- *մշակութային,*
- *մեդիագրագիտություն,*
- *հոգատարություն սեփական անձի նկատմամբ,*
- *ՏՀՏ գրագիտություն,*
- *կարիերայի զարգացում,*
- *ապագայի կառուցման ներգրավածություն, մասնակցություն:*

## Չինաստան

Չինաստանում կրթական համակարգը զգալի փոփոխություններ է կրում: Բարեփոխումները սկսվեցին 1980-ականներին, իսկ ընդամենը 33 տարում Չինաստանն այդ ճանապարհին անցավ այնպես, որ մյուս զարգացած երկրները, ինչպիսիք են Ֆրանսիան, ԱՄՆ-ն, Գերմանիան, անցան մի ամբողջ դար: Մինչ բարեփոխումների մեկնարկը բնակչության մոտ 23%-ը լրիվ անգրագետ էին, այսօր այս ցուցանիշն ընդամենը 5% է: Կոմպետենցիաների զարգացումը չինական կրթական համակարգում կառուցված է ընդհանուր ուսուցման մեջ՝ ներառյալ հիմնական տարրերը, առարկայական գիտելիքներից մինչեւ աշխարհայացքի եւ բնավորության զարգացում:

Կրթական կոմպետենցիաներն են.

- *ինքնազարգացում (սովորելու կարողություն, առողջ ապրելակերպ),*
- *մշակութային հիմքեր (մարդասիրություն, գիտական մոտեցում),*
- *սոցիալական ներգրավածություն (պատասխանատվություն, նորարարություն):*

## Կորեա

Կորեայի Հանրապետությունը համարվում է զարգացող երկիր, այնուամենայնիվ, նրա տնտեսությունը միջազգայնորեն հայտնի է բարձր տեխնոլոգիաներով եւ ֆինանսական առումով: Հարավային Կորեայի քաղաքացիների 68%-ը 25-34 տարեկանում ունեն առնվազն բակալավրի կոչում՝ սա ամենաբարձրն է համաշխարհային տնտեսապես զարգացած երկրների շարքում: Կոմպետենտ սովորողի բնութագիրներ՝

Ինքնակառավարում: Կառավարում է սեփական կյանքը, ունի ինքնություն եւ ինքնավստահություն՝ հիմնվելով կյանքի եւ մասնագիտական աճի համար անհրաժեշտ կարողությունների եւ որակավորումների վրա:

Աշխատել գիտելիքով եւ տեղեկատվությունով: Մշակում եւ կիրառում է տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքներն ու տվյալները գործնական խնդիրների ռացիոնալ լուծման համար:

Ստեղծագործական մտածողություն: Կատարում է բացահայտումներ՝ ինտեգրելով տարբեր աղբյուրներից գիտելիքները, հմտությունները եւ փորձը:

Գեղագիտություն եւ հուզականություն: Գտնում եւ ընդունում է կյանքի իմաստներն ու արժեքները՝ ուրիշների ապրումակցելով եւ նրանց մշակութային առանձնահատկությունները ըմբռնելով:

Հաղորդակցություն: Լսում է ուրիշներին հարգանքով եւ արդյունավետ կերպով հաղորդակցվում: Արտահայտվում է սեփական մտքերն ու զգացմունքները կյանքի տարբեր իրավիճակներում:

Քաղաքացիական գրագիտություն: Ակտիվորեն մասնակցում է հասարակությունը դեպի լավը փոխելուն՝ունենալով ազգային եւ համաշխարհային հանրության արժեքներ:

Ընդհանրապես, կրթական համակարգում նորարարությունները արդյունավետ են եւ ժամանակի հրամայական: Աշխարհում նույնիսկ ամենազարգացած երկրներում պարբերաբար փոփոխություններ կատարվում են կրթական ոլորտում: Ցանկացած երկրի զարգացվածության եւ բարեկեցության աստիճանը պայմանավորված է այդ երկրի վարած կրթական քաղաքականությամբ: Հուսով ենք, որ մեր որդեգրած նոր կրթական համակարգը համապատասխանում է նաեւ մեր ազգային առանձնահատկություններին եւ արժեքներին, կարողանալու են լուծել կրթական ոլորտում առկա խնդիրները:

Իբրեւ վերջաբան՝ մեջբերենք Նելսոն Մանդելայի խոսքերը. *«Կրթությունն ամենահզոր զենքն է, որը դու կարող ես օգտագործել աշխարհը փոխելու համար»:*

***Աիդա ՍԱՐԳՍՅԱՆ***
***ՀՊՏՀ մագիստրանտ,***
***«ԿԶՆԱԿ» հիմնադրամի մասնագետ***



Խոսք հիշատակի

# Արգասավոր ուղի

Գավառի պետական համալսարանը ծանր կորուստ կրեց. կյանքից հեռացավ Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ, Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հասարակական գիտությունների ամբիոնի պրոֆեսոր, Սարուխան գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցի երկարամյա տնօրեն, բազմավաստակ մանկավարժ, նվիրյալ մտավորական, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հայկ Հեքիմի Օհանյանը, ով իր ողջ գիտակցական կյանքում՝ շուրջ վեց տասնամյակ, ծառայել է մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության շնորհակալ գործին:



Գավառի պետական համալսարանի ռեկտորատը խորապես վշտակցում է Օհանյանների ընտանիքին, հարազատներին, Հայկ Օհանյանի բոլոր տարիների գործընկերներին, աշակերտներին եւ ուսանողներին, բոլոր համալսարանականներին, քանզի ծանր կորուստն ընդհանուր է...

Բոլորի սիրելի ընկեր Օհանյանն իր լուսավոր կերպարով միշտ կհիշվի՝ որպես Սարուխանի թիվ 2 դպրոցի տնօրեն, Գավառի պետական համալսարանի մանկավարժության բաժնի խոհեմ եւ բազմափորձ դասախոս, բարի ու ազնիվ, վստահելի ու շիտակ ընկեր, մարդկային եւ մասնագիտական բարձր որակներ կրող գործընկեր, խստապահանջ ու միաժամանակ ուշադիր եւ հոգատար դասախոս, խորհրդատու բարեկամ՝ որպես մարդու, մտավորականի, ուսուցչի, դասախոսի, նվիրյալ մանկավարժի ու տնօրենի վեհ օրինակ:

Հայկ Օհանյանը ծնվել է 1941 թվականի ապրիլի 11-ին, Հայաստանի խորհրդային սոցիալիստական Հանրապետության (ՀԽՍՀ) Նոր Բայազետի շրջանի Սարուխան գյուղում, ծառայողի ընտանիքում:

1948 թվականին ընդունվել եւ 1958 թվականին գերազանց առաջադիմությամբ՝ արծաթե մեդալով, ավարտել է Սարուխանի միջնակարգ դպրոցը:

1959-1960 ուսումնական տարում ընդունվել եւ 1964 թվականին բարձր առաջադիմությամբ ավարտել է Երեւանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը՝ ստանալով մաթեմատիկայի եւ գծագրության ուսուցչի որակավորում:

1964 թվականին՝ բուհն ավարտելուն պես, նշանակվել է աշխատանքի Սարուխանի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: Աշխատել է մինչեւ 1972 թվականը: Այդ ընթացքում եղել է ֆիզիկամաթեմատիկական դասընթացների առարկայական մեթոդմիավորման նախագահ, տարածաշրջանում մաթեմատիկայի առաջավոր փորձի դպրոցի ղեկավար, 1968-1972 թվականներին համատեղությամբ աշխատել է՝ որպես գյուղի երեկոյան միջնակարգ դպրոցի տնօրեն: 1973 թվականին նշանակվել է Սարուխան գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցի տնօրեն եւ ձեւավորել համերաշխ ու արդյունավետ գործող կոլեկտիվ:

Վաստակաշատ մանկավարժի տնօրինության ընթացքում՝ 1973-2007 թվականներին, բարելավվել են դպրոցի շենքային եւ ուսումնանյութական պայմանները, կառուցվել է նոր կաթսայատուն, բարելավվել է մանկավարժական կադրերի որակական կազմը, սովորողների ուսման առաջադիմությունը եւ որակը, իսկ 2006 թվականին կապիտալ վերանորոգվել է դպրոցի ամբողջ շենքը: Հայկ Օհանյանը սիրով եւ հայրական հոգատարությամբ կյանք է ճանապարհել աշակերտների եւ ուսանողների բազմաթիվ սերունդների, որոնց մշտապես ուղեկցել են սիրելի տնօրենի ու դասախոսի իմաստուն խորհուրդներն ու արժեքավոր պատվիրանները:

Սովորել եւ 1988 թվականին ավարտել է Երեւանի պետական համալսարանի ասպիրանտուրան՝ *«Մանկավարժություն»* մասնագիտությամբ:

1995 թվականից դասախոսել է Գավառի պետական համալսարանում:

Պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ *«Աշխատանքային դաստիարակության հիմնահարցերը եւ հայ մանկավարժական ժառանգությունը»* թեմայով: 2002 թվականին Հայկական պետական մանկավարժական համալսարանի մասնագիտական խորհրդի որոշմամբ ստացել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2003 թվականին Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ եւ ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի հաստատմամբ ստացել է դոցենտի գիտական կոչում:

Հայկ Օհանյանը հայրենասեր քաղաքացի էր, ով իր երկրի ու համայնքի հանդեպ պատասխանատվության խորին զգացումով զբաղվել է նաեւ հասարակական-քաղաքական գործունեությամբ. 1975-1986 թվականներին եղել է ՀԽՍՀ Կամոյի շրջանային խորհրդի պատգամավոր, 1991-1995 թվականներին՝ Սարուխանի գյուղխորհրդի պատգամավոր, իսկ 1996 թվականից մինչեւ 2000 թվականը ընտրվել է Սարուխան համայնքի ավագանի: Հեղինակ է ավելի քան ութսուն գիտական զեկուցումների, ուսումնամեթոդական ձեռնարկների, ուղեցույցների, հոդվածների, գրախոսությունների, որոնք ունեն մասնագիտական-մանկավարժական, ինչպես նաեւ հասարակական-քաղաքական ուղղվածություն:

Խորհրդային ամբողջատիրության պայմաններում Օհանյանի խելացի եւ սուր հրապարակախոսական հոդվածները լույս են տեսել հանրապետական մամուլում եւ հատուկ ուշադրության արժանացել: Նրա բարձրաձայնած հիմնահարցերը խիստ արդիական են նաեւ այսօր: Այդ մասին են ակնհայտորեն վկայում Հայկ Օհանյանի հոդվածների վերնագրերը՝ *«Այդպես մինչեւ ե՞րբ» «Մտածել նորովի, աշխատել նորովի», «Ինչո՞ւ չի շտկվում», «Որպեսզի նորից չսխալվենք», «Վշտացնող վրիպումներ», «Անհրաժեշտ է վերանայել», «Անհապաղ լուծում պահանջող հարցեր», «Բարեփոխման պահանջներով», «Մտորումներ խորհրդակցությունից հետո», «Նորի ակնկալիքով եւ հավատով լինել վերակառուցման մարտիկ եւ ոչ թե...», «Ըստ արժանվույն գնահատել ուսուցչին», «Դեղատոմսերը շատ են, իսկ դեղամիջոցնե՞րը...», «Փակ աչքեր նորի առջեւ...», «Ինչպե՞ս չտարակուսել...», «Ի՞նչ է այն. բուհական մանկավարժության հարցեր», «Հոգատարություն երիտասարդ մասնագետների նկատմամբ», «Աշակերտի անհատականությունը», «Մասնագիտական կողմնորոշման մի քանի հարցեր», «Անհատական մոտեցումը ուսուցման արդյունավետության բարձրացման միջոց», «Երեխայի համար ուսուցչի կենդանի խոսքն անփոխարինելի է», «Օգնություն գիտաշխատողին», «Մանկավարժության նոր ձեռնարկ», «Առաջարկություններ, նկատառումներ»* եւ այլ խորագրերով:

Իր երկարամյա բեղուն աշխատանքային գործունեության ընթացքում Հայկ Օհանյանն արժանացել է բազմաթիվ պարգեւների, 2014 թվականին ՀՀ Նախագահի կողմից արժանացել է Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժի կոչման:

2006 թվականին ճանաչվել է՝ որպես Գեղարքունիքի մարզի *«Տարվա լավագույն տնօրեն»*՝ պարգեւատրվելով ՀՀ կրթության, գիտության նախարարության շնորհակալագրով եւ *«Ոսկե աստղ»* հուշամեդալով:

Պարգեւատրվել է Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 40-ամյակին հայտարարված հանրապետական մրցույթում հաղթող ճանաչվելու, Հոկտեմբերյան հեղափոխության 70-ամյակի առթիվ կազմակերպված համամիութենական սոցիալիստական մրցության մեջ բարձր արդյունքներ արձանագրելու համար: Արժանիորեն խրախուսվել է այլ նվաճումների եւ ձեռքբերումների համար:

Նա հոգատար ամուսին էր, բացառիկ հայր, ով ուրախանում էր իր երկու որդիների՝ Նարեկի եւ Գեւորգի ու բյուր շրջանավարտների հաջողություններով:

Խորին խոնարհում Հայկ Հեքիմի Օհանյանի հիշատակին:

*«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:*

***Գավառի պետական համալսարանի ռեկտորատ***

R

## Հայտարարություն

